

## Խմբագրական

# ԱՆՄԱՐ ԶԱՀԸ ԱՊՐԻԼԵԱՆ

Երեկ անմար կրակ էր, այսօր՝ անմար ջահ:

Ցեղասպաններուն կետ-նպատակը ազգի մը սպառնալու վերացումն էր աշխարհի երեսէն. անոր հայրենիքին, կալուածներուն, նիւթական ժառանգութեան իրացումն էր նենգօրէն: Անյագորդ ախորժակով եւ անասնական բնագրով կատարուած մեծագոյն յանցագործութիւնը՝ ցեղասպանութիւնը, գաղտագողի հովանաւորուած էր կարգ մը մեծապետական ուժերու կողմէ. շատեր թաքուն կը հրճուէին, ուրիշներ իրենց գծում հաշիւները կ'որոճային, ոմանք ալ իրենց մեղսակից լռութեամբ անմեղութեան քղամիտով կը ծածկուէին:



Մանրամասնօրէն մշակուած, մանրակրկիտօրէն ծրագրուած եւ զազանօրէն գործադրուած հայասպանութեան անդրագոյն նշանակը ոչ մէկ հայ թողուլն էր Երկիր մոլորակին վրայ:

Յաջողեցա՞ն անոնք իրենց ծրագիրին մէջ: Մի գուցէ կրցան հասնիլ իրենց սկզբնական նպատակին՝ բռնազաւթել հայոց հայրենիքին կարեւոր մասը. մի գուցէ՝ հասան յաջորդին՝ իրացնել եւ աւարի ենթարկել հայոց շքեղ թողօնը. սակայն՝ հայր վերացնելու սաղայէլական երազանքը մնաց կիսատ. փուլ եկած երկնակամարէն զարթնեցաւ փիւնիկը եւ յուսաբեկ հայր ընծիւղներ տուաւ աւելի փարթաւ ու կենսակից՝ պատրանաբափ ընելով չարագուշակ չարամիտները տեսակաւոր:

Կար ու կը բոցկտար անմահութեան կրակը տարագրեալ հայութեան սիրտերուն մէջ: Տօք անապատներէն մինչեւ ցուրտ երկինքներ, անհաղորդ ոստաններէ մինչեւ թիթեալէն գաղթականացներ, օտարտի միջավայրերէ մինչեւ ձուլող շրջանակներ մահացու սպառնալիքներ էին հայրենահան հայութեան: Հայութիւնը, այդ բոլոր աւերիչ հողմերուն դիմաց մնաց տոկուն՝ քանզի կրակը կար վերապրումի, դիմանալու եւ յարգելու յիշատակը ցեղասպանուած պապերուն: Այդ հուրիբան կրակը ոչ ոք կրնար խլել հայէն: Կրակը վարակեց ջերմութիւն՝ ցուրտին դէմ, ոգի՝ թուլութեան փոխան, լոյս՝ խաւարին դիմաց եւ վերջապէս յոյս՝ ապրելու հայրենական կարօտով ու անդուլ պայքարով:

Անմար կրակը հայոց ընտանեկան երոյքներն էին ամէնուր. դպրոց, եկեղեցի, լեզու, մշակոյթ, ակումբներ, տիպ ու տառ, մամուլ կրակը վա՛ռ պահեցին: Նահատակներու անմեծ յիշատակը թոյլ չտուաւ, որ մարմնի կրակը: Ամէն Ապրիլ ամսուն կրակը աւելի ճենճեցաւ, բորբոքեցաւ, քանզի սերունդներուն մօտ սկսած էր միսալ վրէժի ու պայքարի հուրը՝ ընդդէմ ցեղասպանին: Ոչինչ մոռցուած էր. ոչ ոք մոռացութեան մատնուած էր:

Յետեղեռնեան յաջորդական սերունդները կրակին ընդմէջէն տեսան խորախորհուրդ գաղտնիքը ազգին յատկութեան: Ծիծեռնակաբերդի անմահական կրակը եղաւ խորհրդանիշը ազգային վերածնունդի, պահանջատիրութեան պատգամին, չընկրկելու ոգիին: Համազգային ուխտավայր դառնալով՝ յատկութեան կրակը իր շուրջ համախըմբեց բեկորները հայութեան: Հայրենի հողին վրայ, հողին ուժով գորացած եւ իմաստնացած ազգը խոտվեցաւ այդ կրակէն ճառագայթող աւիւնով եւ նոր սերունդներ զայն վերածեցին ջահերու՝ առաջնորդելու համար դէպի աղբիւրը լոյսին եւ ապա՝ յոյսին: Երեկուան կքած հայութիւնը, բնագորկ խլեակները հայոց, հետզհետէ վերածուեցան ջահակիրներու՝ ո՛ղջ աշխարհին աւետելու՝ որ եղեռնագոհ հայութիւնը սպառած չէ: Այլեւ՝ կենդանի՛ է, ջահը իր ձեռքին է եւ հայեացքը անվրէպօրէն ուղղած է Արարատի գագաթին:

Ամէն Ապրիլ ամսուն կ'ալեկոծին խոտվեալ հողները հայոց: Ինչո՞ւ. որովհետեւ այդ կրակն է որ կ'անթելուի մեր սրբադասեալ նահատակներու անթրոցով: Կորուսեալ հողին դողողն է որ կը սարսռայ մեր էութիւններուն մէջ: Ջահակիրներու փաղանգները զայրագին կը դոփեն իրաւագրկեալի ցասումով, բայց՝ իրաւատէրի վճռականութեամբ:

Ապրիլ 24-ը ուխտի օր է ջահակիրներուն համար: Հոն՝ ուր հայու սիրտ կը բաբախէ՝ հոն անմար է ջահին կրակը: Ժամանակը չի՛ կրնար խամբեցնել եւ մեղմել անմար կրակին բուն պատճառները՝ հայոց անպարագիր վիշտն ու կսկիծը, կորուստներուն անչափելի տարողութիւնը, իրաւատիրութեան մղումն ու գիտակցութիւնը, խլրտող ու զալարտող մշտաբորբոք ոգին հայոց: Ի՛նչ փոյթ, խուլ ակնաջնջներու եւ քար սիրտերու անարձագանգ լռութիւնը, աւելին՝ ի՛նչ փոյթ ուսխին ուրացումներն ու ժխտումները տեսական: Երբ առկա է կրակը, երբ ջահակիրները կը տողանցեն դէպի նպատակ՝ ուրեմն Հայոց Ցեղասպանութեան չլուծուած հարցն ու հատուցման օրակարգերը կը մնան մշտաբարձր: Այս անշեղի ուղիով կ'ընթանան ջահը բռնած ջահակիրները նորակոյ:

Դարձեալ կը խոնարհինք մեր նահատակեալ սերունդներուն ի յիշատակ՝ որպէս մեկական անմար կրակներ Հայոց Գողգոթային: Դարձեալ կը յիշատակենք ինկած հերոսները բոլոր ժամանակներուն՝ որպէս մեկական անմար կրակներ հայոց պայքարին: Եւ ապա՝ ջահը բարձրացնելով կ'ուղղուիմք դէպի նպատակ՝ որպէս ապացոյց անմար կրակին:

Ողջոյններ, բի՛ւր ողջոյններ երիտասարդ ջահակիրներուն:

Ապրիլեան կրակը անմար է՝ տանամենակէ տանամենակ՝ քանզի ջահակիրները պիտի յաջորդեն զիրար սերունդէ սերունդ:

## ԼԻԲՆԱՆԱԿԱՅԸ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

Յանձնառու մնալով իր ազգային պարտականութեանց, լիբանահայութիւնը 23 եւ 24 Ապրիլին ոգեկոչեց Հայոց ցեղասպանութեան տարիներուն զոհուած մեկուկէս միլիոն սրբադասուած նահատակներուն յիշատակը: Կազմակերպութեամբ հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն, Երեքշաբթի, 23 Ապրիլի երեկոյեան ժամը 7-ին, Պուրճ Յա-



մուտէն սկսաւ շահերով ժողովրդային երթ դէպի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթիլիասի մայրավանք: ՀՄՄ Պեյրուօի փողորախումբն ու արիւները ՀՄՄ-ի եւ ՀԵԸ-ի խումբերուն հետ ընկերակցեցան հազարաւոր լիբանանցիներու շարքերուն, որոնց, քոր կուսակցութիւններու եւ միութիւններու ղեկավարութեանց կողքին, գլխաւոր-



րեցին ՄԴՀԿ Լիբանանի շրջանի Կարիշ մարմնի ատենապետ ընկ. Վանիկ Տագսեանն ու անդամները, ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Զեօշկերեանը, ՀՄՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Միսաք Նաճարեանը, Պեյրուօի



Քաղաքապետական խորհուրդի անդամ եւ ՀԿԲՄ-ի ատենապետ Արամ Մալեանն ու ՀՄՄ Պեյրուօի ատենապետ Ռաֆֆի Մալեանը:



Երթի աւարտին, Աթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ, գիշերուան ժամը 10-ին, փողորախումբերը հնչեցուցին քայլերգները, ապա ներկայացուցան յատուկ յայտագիր,

# ԼԻՔԱՆԱՆԱԿԱՅԸ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

(Շարունակում Ա. Էջին)

որուն ընթացքին խօսք առին քաղաքական երեք կուսակցություններու ներկայացուցիչները: Սոցիալ Դեմոկրատ


«ցեղապաշտությունն ու խաւարը պիտի յաղթեն հանրութեան և լուսաւորութեան: Ընկ. Սուղայե

Յկումի աւարտին ժողովուրդին իր պատգամը փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը: Ան իր խօսքը ուղղեց Թուրքիոյ նախագահին՝ հարց տալով, թէ ուրկէ եկած են մատուռին մէջ ամփոփուած աճիւնները: «Պատմութիւնը կը վկայէ, Նոյնիսկ թուրք պատմագետներու կողմէ, թէ ինչ որ կատարուեցաւ 1915-ին ի՛մ



Յնչակեան կուսակցութեան ուղերձին մէջ, ընկ. Վաչէ Մուրադեան նախ դիտել տուաւ, որ հայ ժողովուրդի դարաւոր պատմութիւնը կը յատկանշուի գոյութեան եւ ինքնահատատումի համար մղուած մնայուն պայքարով, մահով եւ յարութեամբ: Ան ցաւ յայտնեց, որ միջազգային ընտանի-

եան իր խօսքի աւարտին ահագանցեց, որ եթէ միջազգային ընտանիքը այսօր իսկ համարժեք պատասխան չտայ



ցեղասպանին, ապագային պիտի կանգնի աւելի լուրջ պատասխանատուութեան դիմաց:

պատերուս դէմ քո՛ւ պատերուդ կողմէ, ցեղասպանութիւն էր՝ ծրագրուած ու գործադրուած պետական մաշտապով», շեշտեց Վեհափառ Յայրապետը եւ Ռեճեպ Թայիպ Էրտողանին կոչ ուղղեց չփորձելու Սփիւռքը հակադրել Յայաստանին, որովհետեւ հայ ժողովուրդը մէկ ամբողջութիւն է, մէկ ազգ է եւ ունի մէկ պահանջատիրութիւն: Արամ Ա. կաթողիկոսը ապա հայութեան թելադրեց համախմբուիլ ազգին ու հայրենիքին սրբազան արժէքներուն, համահայկական օրակարգի մը՝ թէկուզ տարբեր մօտեցումներով, եւ անվիճելի իրաւունքներու շուրջ՝ ամեն բանէ վեր դասելով Յայաստանի փրկութիւնը:

քը ցարդ իրաւական արժանի գնահատական չէ տուած Յայոց ցեղասպանութեան առնչութեամբ, որովհետեւ կարգ մը ուժեր տեղի կու տան Թուրքիոյ ճնշումին, իսկ ուրիշներ մեղաւկից են նմանօրինակ այլ յանցանքներու: Անպատժելիութիւնը նպաստած է, որ մինչեւ օրս շարու-

## ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, 24 Ապրիլի առաւօտեան, ՅՄՄ-ի փողերախումբը եւ սկաւտները ժողովուրդին ընկերակցեցան

ՅՄՄ Անթիլիասի սկումբէն Անթիլիասի մայրավանք, ուր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ Ցեղասպանութեան



նակուն սպանդները եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններու՝ ինչպէս Արցախի եւ աշխարհի գանազան վայրերու մէջ», ըսաւ ընկ. Մուրադեան: Նշում կատարելով այս օրերուն Կազախի մէջ շարունակուող ոճրագործութիւններուն, ան վստահեցուց, որ եթէ անցեալի ոճրա-



գործները պատժուած ըլլային, ապա մերօրեայ դահիճները առնուազն կը զսպուէին: «Այն բոլոր սպանդներն ու ցեղային գտումները, որ տեղի ունեցան Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն, հետեանք էին երիտ-թուրքերու ազգայնական եւ արտաքին ծաւալապաշտական



համաթուրանական ծրագրերուն», ահագանցեց ընկ. Մուրադեան: Ան ապա անդրադարձաւ Արցախի մէջ կրկնուող ոճիրներուն եւ շեշտեց միջազգային քաղաքական համարժեք արձագանգի անհրաժեշտութիւնը, այլապէս

(Շար.ը տեսնել 4րդ Էջ)

# Ո Ղ Ե Կ Ո Չ Ո Ւ Մ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ

23 Ապրիլի երեկոյեան հսկումի հաւաք տեղի ունեցաւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Զայոց Ժառանգութեան պատրիարքարանի շրջափակին մէջ, ներկայութեամբ Ամեն. Եւ Չեր. Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԿ. Կաթողիկոս-պատրիարքին, հայ եւ արաբ բարձրաստիճան անձնաւորութիւններու: Զսկումի ընթացքին ներկայացուցեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր՝ Նուագ, ասմունք, երգ եւ պար: Օրուան խորհուրդը իրենց պատգամներով փոխանցեցին Գերոզ Զէշիշեանը՝ հայերէնով, եւ Կարո Մարաշլեանը՝ արաբերէնով: Ցուցադրուեցաւ յատուկ տեսագրութիւն մը, որ կը խտացնէր Յեղասպանութենէն վերապրող հայերուն վկայութիւնները, ուր վերստին յատկապէս կ'երեւնէր իրականութիւնը: Զսկումի աւարտին իր պատգամը փոխանցեց Նաեւ Ռաֆայէլ Պետրոս ԻԿ. Կաթողիկոս-պատրիարքը:



24 Ապրիլի առաւօտեան, ՀՍՄ Պեյրուօի փողերախումբը եւ սկաւոտական խումբերը խալիլ Պատաուիի ակումբէն սկսած տողանցքով ուղղուեցան Ժառանգութեան պատրիարքարան, ուր ծաղկեպսակներ գետնէն Մեծ Եղեռնի զոհերու յուշակոթողին եւ յարգեցին անոնց յիշատակը: Արժանապատիւ Տեր Կարապետ Զինյ. Թաղեոսեան ողջունեց ՀՍՄ-ի խումբը, գնահատեց անոր աշխատանքը եւ մարդեց յարատեւ յաջողութիւն:



Նախապէս՝ Երկուշաբթի, 22 Ապրիլին, հայ կաթողիկէ «Արարատեան» թատերասրահին մէջ տեղի ունեցած էր «Որպէսզի յիշատակը վառ պահենք» խորագրեալ հանդիսութիւնը: Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Միշէլ Ապս որպէս օրուայ բանախօս մանրամասնօրէն ներկայացուց այն օրինակացութիւններն ու ցեղասպանութիւնները, որոնց ենթարկուեցաւ քրիստոնէայի ժողովուրդը: Ան ցաւ յայտնեց, որ Յեղասպանութենէն 109 տարի ետք, ոճրագործը դարձեալ կը բանայ վերջը, որ կը կոչուի Արցախ:



Հոգեւոր Տէրը իր պատգամին մէջ շեշտեց, որ «հայերը, հակառակ բոլոր հալածանքներուն, շարունակեցին իրենց նուիրական գործը, բայց որքան կու տան, նոյնքան ալ կը զրկուին իրենց մարդկային իրաւունքներէն»: Ան դիտել տուաւ, որ այսօր ալ պաղեստինցիները կը կրեն նմանօրինակ տառապանք եւ կ'ոտնահարուին անոնց կեանքն ու իրաւունքները: «Աղօթե՛ք խաղաղութեան համար, աղօթե՛ք հաշտութեան, ներումի եւ փոխարգանքով համակեցուցեցեալ համար»: Ան իր պատգամը եզրափակեց կոչ ուղղելով աղօթելու խաղաղութեան համար, հաշտութեան, ներումի եւ փոխարգանքով համակեցուցեցեալ համար»:

# ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 109-ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

Զայոց Յեղասպանութեան 109-ամեակի յիշատակութեան առիթով, Զայ Աւետարանական պաշտամունք մը տեղի ունեցաւ: 24 Ապրիլ 2024-ի առաւօտը, Նոր Մարաշի Զայ Աւետարանական եկեղեցիին մէջ: Մերձաւոր Արեւելքի Զայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան (ՄԱՅԱԵՄ) Պեյրուօի եկեղեցիներու հովիւներու կազմակերպու-



թեամբ, պաշտամունքին պատգամաբերն էր պատուելի Ծօ Կարապետեան՝ Ա.Մ.Ն.Էն: Պաշտամունքին ներկայ էր Նաեւ ՍԴՅԿ-ի ներկայացուցիչ Պրն. Միհրան Շահինեանը: Զայ Աւետ. գոլէճի Նուագախումբը եւ Պուրճ Յամուտի Զայ Աւետ. երկրորդական վարժարանի («Շամլեան-Թաթիկեան») երգչախումբը գեղարուեստական փայլը տուին այս յիշատակութեան:

Վեր. Ժիրայր Ղազարեան Սաղմուս 54-ի խօսքերով պաշտամունքը բացաւ, փոխասացաբար ժողովուրդը առաջնորդեց «Հաւատքի Յարթութիւնը» (Եբր. 11) ընթերցումով, եւ աղօթքով խնդրեց Աստուծէ, որ իր ներկայութիւնը կեդրոնը մնայ յիշատակութեան արարողութեան ընթաց-



քին: Յաջորդիւ Վեր. Զրայր Զօլագեան հաւատքի գերակայութիւնը շեշտեց իր աստուծաշնչական ընթերցումով (Հռոմ. 8.31-39): Ապա լարային Նուագախումբը (Հենրի Իշխանեան, դաստիարակ) գեղեցիկ զգայունութեամբ Նուագեց «Ատանայի Ողբը» եւ «Կիլիկիա»: Վեր. Յովհաննէս Սվաճեան սրտանց աղօթք մատուց, Աստուծոյ բերելով հայ ազգին բոլոր յոյգերը, եւ խնդրելով որ Տէրը ազգը իր լոյսով լուսաւորէ եւ առաջնորդէ: Աշակերտական երգչախումբը, Նեկտար Փալագեանի խմբավարութեամբ եւ Շողեր Կրպոյեանի Նուագակցութեամբ, ճաշակով եւ ներդաշնակութեամբ «Դարեր Անցան» (Այվագեան) եւ «Ով Արարիչ» (Թորոսեան) երգեցին: Պաշտամունքի ընթացքին ներկաները Նաեւ իրենց ձայները միացուցին հոգեւոր երգեր երգելով, Տիկ. Սիլվա Մաչերեանի դաշնամուրի ընկերակցութեամբ:



Օրուան պատգամաբերը՝ Պատ. Ծօ Կարապետեան, իր խորհուրդները արտայայտեց Սաղմուս 13-ի բառերով, «Ով Տէր, մի՛նչէ ե՛րբ թշնամիս իմ վրաս պիտի բարձրանայ»: Նայելով անցեալի եւ ներկայի տխուր իրականութիւններուն, հարց տուաւ թէ ո՞վ օգնութեան պիտի հասնի, եթէ ոչ Աստուած ի՛նչ: Տեղասպանութեան մէջ ինկածներուն չորացած ոսկորները վկայ են, թէ միայն Աստուած հաւատարմաբար կը կենայ մեր կողքին, մնացորդ մը ապրեցնելով եւ անոնց յոյս տալով, թէ ի՛նչ ամէն շարունակ պիտի դադրեցնէ եւ հատուցանէ անխորաբար: Պատ. Կարապետեան յորդորեց, որ ժողովուրդը աչքերը միշտ Տէր Յիսուսի յարէ եւ իր լոյսին մէջ քալէ:

Պատգամէն վերջ նուիրահաւաքին համար Վեր. Ռաֆայէլ Մարգարէան հրաւիրեց ներկաները, որ առատաձեռնութեամբ տան տեղահանուած արցախցիներու օգնութեան ծրագրին: «Զայր Մեր» իր գեղեցուցութենէն ետք, Վեր. Դոկտ. Փօլ Զայտօսթեան՝ ՄԱՅԱԵՄ-ի նախագահի տեղապահ, աղօթք բարձրացուց առ Աստուած, որ հայ ժողովուրդը խաչեալ եւ յարուցեալ Յիսուս Քրիստոսի քայլերուն հետեւելով ընթանայ, որմէ ետք ներկաները արձակութեան Առաքելական Օրհնութիւնով:

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄ Ս.Դ.Յ.Կ. «ՍԱՊԱՅ ԳԻՒԼ», «ՓԱՐԱՄԱԶ» ԵՒ «ՏԱՐՈՍ» ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒՆ ՀԱՅՈՑ ՄԵՃ ԵՂԵՆՆԻ 109-ՐԿ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՄՈՒՆՎԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ՝ Հ.Մ.Մ.-ՄԱՍԻՍ ԱԿՈՒՄԲԻՆ ԱՌՋԵՒ

Ինչպէս տասնամեակներ շարունակ, 1915 թուականի Զայոց Մեծ Եղեռնի, 1920 թուականի Զայկական Կիլիկիոյ Աթաթուրքի յանձնումին եւ 1937-38 թուականներուն Ալեքսանտրէի «Սանճագ»-ի քաղաքական վաճառքի ողբերգութիւններէն մազապործ փրկուած հայու զաւակներ՝ Կիրակի, 21 Ապրիլ 2024-ի երեկոյեան, հաւաքուած էին հայաշատ Պուրճ Յամուտի մէջ գտնուող հայրենասիրական կեդրոն՝ Ս.Դ.Յ.Կ.-ի Հ.Մ.Մ.-Մասիս ակումբին առջեւ: Մեծ Եղեռնի 109-րդ յիշատակին նուիրուած Մոմավառութիւնն ու Ոգեկոչումը կազմակերպուած էր Ս.Դ.Յ.Կ. «Սապահ Գիւլ», «Փարամազ» եւ «Տարոս» մասնաճիւղերուն կողմէ:



Հ.Մ.Մ.-ի փողերախումբին տաղանդաշատ անդամներու ժամանումը ազդարարեց ոգեկոչման հանդիսութեան սկիզբը՝ Լիբանանի եւ Զայաստանի ազգային հիմերու փայլուն կատարողութեամբ, դրօշներու հովանիին ներքոյ: Բճմայիլի հարթակի ֆոնին՝ լուսապատկերուած քաղաքամայր Երեւանի Ծիծեռնակաբերդի բարձունքին վրայ գտնուող Զայոց Յեղասպանութեան յուշակոթողը, մինչ ժամանող ներկաները կարմիր վարդերով զարդարեցին զայն: Մոմավառութիւնն ալ, որուն մասնակցեցան Ս.Դ.Յ.Կ.-ի զանազան կուսակցութեան, Հ.Մ.Մ.-ի եւ Հ.Մ.Մ.-Մասիսի ղեկավարութիւնը՝ խորին յանգանքի արտայայտութիւն էր մեր բիւրաւոր զոհերու յիշատակին:



Ընկ. Սարգիս Մուղալեան բարի գալուստի կոչով դիմեց ներկայ եւ մասնակից ղեկավարութեան՝ Ս.Դ.Յ.Կ.-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչին, Ս.Դ.Յ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ մարմինի ատենապետին եւ անդամներուն, Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական վարչութեան եւ Հ.Մ.Մ.-Մասիսի ժրջան անդամներուն, Նաեւ՝ հիւրաբար ներկայ գտնուող Հ.Յ.Դաշնակցութեան «Նիկոլ Դուման» ակումբի ղեկավարներուն: Ապա, պատմական ակնարկ մը կատարեց հայ ժողովուրդի 1915-ի ցեղասպանութեան, հայկական Կիլիկիոյ եւ Արեւմտեան Զայաստանի դաւադիր վաճառքներուն՝ Մեծ տերութիւններու մասնակցութեամբ:



Ընկ. Մուղալեան յոյս յայտնեց, սակայն, որ Արցախի եւ Նայր Զայրենիքի մէջ տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնները կը յարթահարուին հայ ժողովուրդի միահամուտ ջանքերուն եւ անկտրում պայքարի ոգին շնորհիւ:

Լաւատեսութեամբ եւ զալիք յաղթարշաւով լի ելոյթով, ոգեկոչման հանդիսութեան մասնակիցներուն յոյս եւ հաւատք ներշնչեց Ա.Յ.Դ.Կ.-ի Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Զեօշկերեան: Բացատրելով թէ թուրքերուն եւ մանաւանդ երիտթուրքերուն ցեղասպանութիւնը որ իրագործուեցաւ Նախ քրիստոնէաներուն հանդէպ՝ կը բխէր իրենց ցեղապաշտական ծրագրերէ, որոնք ուղղուած էին Նաեւ ոչ-քրիստոնէայ ժողովուրդներու հանդէպ: Ընկ. Զեօշկերեան յայտնեց, որ արդէն թօթափած ենք անցեալի պարտաւորական իրավիճակը եւ պիտի պայքարինք Նոր յաղթանակներ կերտումի համար, քանի ներկաներուն մէջ կը գտնուին Մեծն Մուրատի (Զամբարձում Պոյաճեան) հարազատներու շարաւիղները...:

Աւարտին՝ պատուանդանի մօտ հրաւիրուեցաւ Տէր Մուրէն քահանայ Ալաւեսեանը, որ իր բացառիկ հայրենասիրական խօսքերով կոչ ըրաւ հայ ազգին միաբանուելու եւ կուռ շարքերով մասնակցելու Նաեւ 23 Ապրիլի երեկոյեան տեղի ունեցալիք ջահերթին՝ Պուրճ Յամուտէն դէպի Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Մայրավանք: Յետոյ՝ «Պահպանիչ»ով օրհնեց մասնակիցները, դարձեալ հանդիպելու ցանկութեամբ:

ՀԱՏՈ ՍՈՍԿՈՅԵՆ  
ՊԵՅՐՈՒՅ

# ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

(Շարունակում է Ա. Էջեն)

սրբադասեալ նահատակներուն նուիրում Ս. Պատարագը մատուցեց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան:



Ապա, հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին, Սրբոց նահատակաց յուշարձան-մատուռին դիմաց տեղի ունեցաւ Բարեխօսական կարգ եւ ծաղկեպսակներու գետեղում, ընկերակցութեամբ ՀՄՍ-ի, ՀԵԸ-ի եւ ՀՍԸՄ-ի փողերախումբերուն, մասնակցութեամբ Լիբանանի մեծ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբեկեանին, քաղաքական երեք կուսակցութիւններու ղեկավարութեանց, հայկական միութիւններու ներկայացուցիչներուն, պետական, քաղաքական, կրօնական եւ դիւանագիտական հայ եւ արաբ անձնավորութիւններու:



Աւարտին, Նորին Սրբութիւնը իր Հայրապետական եւ հայրական ողջոյնը փոխանցեց շրջափակին մէջ հաւաքուած հայորդիներուն, որոնց շարքին էին ոգեկոչումի ձեռնարկներուն մասնակցած լիբանանահայ սկաւտական կազմերն եւ փողերախումբերը:

# Ս.Դ.Հ.Կ. «Յ. ԿՈՒԺՈՒՆԻ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

Ս.Դ.Հ.Կ.ի «Յարութիւն Կուժուի» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, Հինգշաբթի, 18 Ապրիլին, տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 109-ամեակին նուիրուած Ապրիլեան Ոգեկոչման հանդիսութիւնը:

Հ.Մ.Ս.-Անթիլիասի ակումբին սրահը նեղ կու գար հայոց միլիոնաւոր նահատակներուն յիշատակը յարգելու ներկայացած մեր ընկեր-ընկերուհիներուն՝ գլխաւորութեամբ Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական վարչութեան անդամին, Լիբանանի շրջանի Վարիչ Մարմնոյ առեւտրապետին ու



անդամներուն, Հ.Մ.Ս.ի Կեդրոնական վարչութեան առեւտրապետին եւ Ս.Դ.Հ.Կ.ի մասնաճիւղերու վարչութեան ներկայացուցիչներուն ու համակիրներուն համար:

Լիբանանի, Հայաստանի եւ Ս.Դ.Հ.Կ.ի քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէ ետք ներկաները մէկ վայրկեան լրութեամբ յարգեցին սրբադասուած անմեղ նահատակներուն յիշատակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ս.Դ.Հ.Կ.ի «Յարութիւն Կուժուի» մասնաճիւղի վարչութեան անդամ ընկեր Հրաչ Սիւրմենեանը, որ ըսաւ. «1915-ի գարունը փոխան կեանքի ու խիւղի, փոխան ստեղծագործ արարումներու մեր ժողովուրդին բերաւ մահ ու անք, սուգ ու արցունք գաղթ ու հալածանք, ջարդ ու կոտորած, հայրենալքում ու աքսոր», հաստատելով որ՝ «109 տարիներ անցած է արդէն այդ արիւնաբար խժժութեանց օրերէն ու, ցաւօք, այդ անչափելի ոճրագործութիւնը իր արդար ճանաչումը չ'է ստացած»: Ընկեր Սիւրմենեան եզրափակեց իր խօսքը՝ ուխտելով «շարունակել մեր պահանջատիրութիւնը, ծառայել մեր ազգին ու հայրենիքին եւ հայկական ոգիով ու հաւատարմօրէն յանձնառու մնալ միլիոնաւոր նահատակներուն կտակին»:



Գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցան՝ ասմունքով՝ Փաթիլ Փափագեան եւ նուագ ջութակով՝ Ճեսի Աւետիսեան:

Օրուան բանախօսն էր Սահակեան-Լ. Մկրտիչեան Գոլճի Նախկին տնօրէն ընկեր Նազարեթ Ճերեմեան: Ան իր խօսքին նախաբանով բացատրեց Ապրիլեան ոգեկոչման այսօրուան միջոցառման եւ նոյնանման բոլոր ձեռնարկներուն կարեւորութիւնը յատկապէս նոր սերունդին



«ցեղասպանութեան պատմութիւնն ու պահանջատիրութեան դրօշը սերունդէ-սերունդ փոխանցելու հեռանկարով»: Որմէ ետք յարգելի ընկերը հակիրճ վերաբար մը ըրաւ 1878-ի Պեռլինի վեհաժողովէն մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմի աւարտը ինկած ժամանակամիջոցի ընթացքին Օսմանեան կայսրութեան Հայկական հարցը ցեղասպանութեան միջոցով մէկընդմիջտ փակելու ծարագրին մասին: Ապա ընկեր Ճերեմեան ինք իր տուած հարցումներուն որպէս պատասխան փաստարկներ ներկայացուց Թուրքիոյ փանթուրանական նկրտումներուն, միջազգային ընտանիքին անտարբերութեան եւ պաղտոտիւնեան ներկայ անմարդկային սպանողներուն շարունակման մասին՝ ըսելով. «Եթէ Հայոց ցեղասպանութիւնը, որպէս 20-րդ դարու առաջին յանցագործութիւն, օրին խստօրէն դատապարտուէր եւ յանցագործը պատժուէր, հաւանաբար շատ մը ցեղասպանութիւններ, ջարդեր եւ ոճիրներ կանխուէին»: Որպէս եզրակացութիւն



բանախօս ընկերը ներկայացուց երկու առաջարկներ, որպէս հայոց պահանջատիրական «ճամբու քարտեզ», ողջունելով «Ս.Դ.Հ.Կ.ի կեդրոնական մարմինի եւ յատկապէս Լիբանանի մեր ներկայացուցիչին անխոնջ ջանքերը Թուրքիոյ տիրող ռեժիմը խստիւ դատապարտող թուրք մտաւորականութեան եւ կազմակերպութիւններուն հետ բարեկամական կամուրջներ հաստատելու աշխատանքները»:

Ս.Դ.Հ.Կ.ի «Յարութիւն Կուժուի» մասնաճիւղի վարչութեան կազմակերպած այս գօտեպնդող ոգեկոչման հանդիսութիւնը փակուեցաւ «Սարդարապատ»ի երգով:



Hotline: +961-1-258852

Mobile: +961-3-148248 / +961-3-881944

E-mail: info@polo-travel.com

www.polo-travel.com

Bourdj Hammoud - Tripoly Str. - Harboyan Trade Center - Ground Flr.

# ՓՈՒՆՎՐԵԺԻ ՊԱՏԳԱՆՆ ՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

**Միտքի գրգռվելը՝ ՎՐԵԺ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ յիշատակին, բոլոր Վրեժներին, որ ծնունդ, ծնունդու են անպայման**

Հորը տեսնելը տեսել էր, բայց աղօստ էր յիշում: Վերապրող խարբերողներն էին պատմում, որ հայրը, քսանը չբուրած, Միացեալ Նահանգներ է մեկնել, ուսանել է Եյլի, Հարվարտի համալսարաններում, ապրտելուց յետոյ վերադարձել է հարբերոյ, «Եփրատ» ընկերում տարրաբանութիւն, իմաստասիրութիւն, ընկերաբանութիւն է դասաւանդել: Շատ շուտով համաքաղաքացիները նրա բուն՝ Պարզեալ Պարթեւեան անուն-ազգանունը մոռացել, «հարբերոյ Սոկրատ» էին կոչել: 1915-ի Յունիսի հորը, քոլեճի բոլոր ուսուցչապետերի հետ տարել էին Արեգունի՝ Ծովքի հիւսիսային ափամերձ քաղաքաւանը: Հենց այդ պահին էլ թիկնապահներով լիճ էր հասել կուսակալը՝ Ալի Սապիթ պէյը:

- Համբերէ՛ք,- հրամայել, գրեթէ նետուել էր հազի կառնուած կառքից...

Նա կարճահասակ էր, շեղաչք, ո՛վ գիտէ, նախնիները մահմետական ո՛ր վաչկատու յորդայով էին հարբերոյ՝ պատմական Հայաստանի Ծովք լեռնաշխարհը հասել: Իթթահատականները, իշխանութեան անցնելուց յետոյ այդ գրել-կարդալ չիմացող անուսին, ո՛վ առաջին անգամ ինքնաշարժ տեսնելիս հրէշ էր կարծել, լեղապատամ փախել, կուսակալ էին կարգել, որովհետեւ համոզուել էին, հայերին առոււմ է, ատելն ինչ է, մարդ արարած չի համարում: Նահանգապետ կարգուելուց յետոյ շատ էր պատահում, որ կուսակալանիստ Մեգիրե քաղաքում հայի նկատելով կառքից իջնում էր, հեծնում, հրամայում էր տուն հասցնել:

Ի գուր էր Հարվարտի համալսարաններում իմաստասիրութիւն, ընկերաբանութիւն ուսանած ուսուցչապետը նրան հասկացնել փորձում, որ օսմանեան կառավարութիւնը Սահմանադրութիւն է հռչակել, կայսրութեան բոլոր հպարտութիւնի իրաւահաւասարութիւն շնորհել, սիրոյ, եղբայրութեան կոչել: Ալի Սապիթ պէյը ցանցա՞ թել-թել հաշուող մօրուքը ցուցամատով ոլորում, յոխորտում էր.

- Հի կարող պատահել, Ալլիսը հայերին ստեղծել է, որ ծառայել մուսուլմաններին՝ տղամարդիկ՝ ցերեկը, կանայք՝ գիշերը: Հենց չուզէք ծառայել, մենք ձեզ մեր օրինած վաթանից կը սրբենք, կը վերացնենք: Ու հաւատա՛ այդ օրը գալու, շատ շուտ է գալու:

Իրօք՝ այդ օրը եկել, շատ շուտ էր եկել:

- Ուրքս բերէ՛ք,- կառքից իջնելով նա մատնացոյց էր արել պարտնով ձեռքերը թիկունքին կապկպած «հարբերոյ Սոկրատին»,- որա գլուխը ես պիտի ջարդեմ, որ տեսնեմ, որտեղ էր այդքան խելք տեղաւորում:

Ու իսկապէս՝ Արիսի հօր գլուխը ծնկների մէջ էր առել, քարերով փշուր-փշուր արել...

Արիսը մօրն էլ էր աղօստ յիշում: Նորածին քոյր ուներ, մայրը տաք աւազով խանձարուրը գուլացնում, դիտելում էր, փաժամանակ ոսկեցուլ ատամները փայլատելով, երգում.

*- Զուն եղիր, բալաս, աչերդ խուփ արա...*

Այդ ժամանակ Արիսը դեռ չգիտէր, որ մայրն իրեն ծնողաբերելու ժամանակ առաջին յիշուած տարօրինակ ախտով էր հիւանդացել, ատամներն սկսել են կակղել, թափել: Հայրը՝ «հարբերոյ Սոկրատը», նորահարս կնոջը տարել էր Պոլիս, որտեղ հիւանդութիւնը կանխել էր, թուլացած ատամները ոսկեշար պատեանով ամրացրել: Մի անգամ, երբ հայրը վերջապէս գրեթէ ու յատկապէս թերթերից յոգնել, որդուն գիրկն էր առել, Արիսը հարցրել էր.

- Հայրիկ, ինչո՞ւ մեր թաղում միայն իմ մաման ոսկե ատամներ ունի:

Հայրը խանդաղատանքով խառնշտել էր մազերը.

- Բարի ու գեղեցիկ մայրիկները ոսկի ատամով են ծօղնում, տղաս:

Արիսը հաստացել էր՝ մայրն իրօք բարի ու գեղեցիկ էր:

Հոր քցորից յետոյ (դեռ չգիտէին, որ Ծովքում նրան անձեան կուսակալն է տանջասպանել) շրջաբակի հարեւանուհին՝ Մէյրամ հանըմը, ում անունն Արիսը արտաբերել էր կարողանում, Հարսիկ էր ասում, հենց լսում էր մօր օրօրոցայինը, գալիս, Արիսին գրկում, տուն էր տանում: Որ իբր չաղմկի, քոյրիկի քնելուն չխանգարէ:

Տեղահանութեան նախորդ գիշերը մայրը քնեցրեց քոյրը, Արիսին գիրկն առաւ, շշնջաց.

- Լսի՛ր, անուշա, ինչ որ ասեմ ուշադիր լսի՛ր ու միտքդ պահիր: Վաղը հարբերոյի ամբողջ հայրութեանը քցորի պիտի հանեն, յայտնի չէ ուր պիտի տանեն, ինչ պիտի անեն: Մենք հարսիկիդ հետ ամեն բան կարգադրել ենք: Հիմա նա կու գայ, քեզ տուն կը տանի, վաղն էլ մեր քրանանը ճամբայ ընկնելուն պէս, թուրքական որբանոց կը յանձնի: Ինքը գիտի ինչ կ'ասի: Երկուսով շատ մտածեցիք՝ քեզ փրկելու ւաելի ապահով միջոց չգտանք: Միայն թէ վաղուանից քո անունը Արիս չէ, Ապտուլլա է, յիշի՛ր, դու թուրք ես, բայց հայ լինելը, հայկական անունդ մի մոռացիր..

Յետոյ թաղի ճրագները մէկիկ-մէկիկ մարեցին, հարսիկը սեւ վարշամակով եկաւ, Արիսին վարշամակի մէջ առաւ, տարաւ: Մայրը դէմքով շրջուել էր դէպի պատը, չէր նայում: Բայց հենց շրջաբակից անցան, լսուց նրա կողկողանքը, որ մինչեւ լոյս չլուց: Գիշերը Արիսը հարսիկի ծոցում քնեց ու չհասկացաւ, մայրն իրականում էր լալիս, թէ՛ իր երագում...

Հարբերում թուրքական որբանոց վերջերս էին հաստատել, հայերից խլուած մի մեծ շէնք յատկացրել: Կովկասեան ճակատում ռուսական բանակն ու Անդրանիկի կամաւորականները հայկական գիւղերը, քաղաքներն ազատագրելով առաջանում էին, իսկ թուրքերը վրեժխնդրութեան ահից երկիւղած, երեխաներին շալակում, լեղապատամ երկրի խորքերն էին նահանջում: Որբանոցը փախըստական լամուկների համար էին նախատեսել, բայց երբ նրանց հոսքը նուազեց, սկսեցին տեղացիների էլ ընդունել, անգամ ազգութեամբ շատ չհետաքրքրուել: Աւելի լաւ, եթէ որբը հայ լինէր, մանկատանը կը թուրքանար...

Մէյրամ հանըմը Արիսի համար մտավախութիւն չունէր, ծնուած օրից ոչ միայն հետը թուրքերէն էր խօսել, այլեւ ոտանաւորներ, երգեր, անգամ Ղուրանից սուրահներ էր սովորեցրել: Սովորեցրել էր այն ամենը, ինչն ինքն էր իմացել:

Որբանոցի բակում մենակ մնալով Արիսը մի պահ թնկթնկաց, յետոյ շուրջը վազվզող երեխաներին նայեց, ուրախացաւ, ընդառաջ եկան: Հայրիկն նկատեց: Երկար ու լուրջ հասակի համար «Եփրատ» ընկերում նրան Լոյօզ էին կոչում: Տարիքից անհամեմատ մեծ էր երեւում:

Հօր սիրելի սանն էր, երբ ակնոցը կամ որեւէ գիրք էր տանը մոռացած լինում, նրան էր ուղարկում: «Հարբերոյ Սոկրատի» յանձնարարութիւնը կատարելը Հայրը բացառիկ շնորհ էր համարում, մամայում, շիկնում էր, երբ ուսուցչապետի կինը Նեղութիւն պատճառովու համար գրպանները շաքարիտ, չամչաբակ էր լցնում:

Հրայրն էլ իսկոյն Արիսին նկատեց, ձեռքից բռնեց, պտտեց անկիւնը, խիստ հրահանգեց.

- Չլսեմ-չիմանամ, որ ինձ հայկական անունով կանչես, Հասան կ'ասես, իմացա՛ր: Քո անունն ինչ է:

- Ապտուլլա:

- Թող լինի Ապտուլլա: Ուրիշ ճար չունենք, Ապտուլլա, մինչեւ Անդրանիկ փաշան գայ, մեզ ազատի, պիտի համբերենք:

Որբանոցի հայրիկը՝ Մուսթաֆա Էֆենտին, մայրիկը՝ Կիլիկիա հանըմը գիտէին Հասանի հայ լինելը: Եթէ չգիտէին էլ, գոնէ կասկածում էին, բայց կառավարութեանը չէին յանձնում, ընդհակառակը, ամէն կերպ սիրաշահում էին: Պատերազմում հիւժուած, սնանկացած երկիրը մի-լինանոր ծնողազուրկների սովամահութիւնից փրկել չէր կարողանում, հարբերոյ թուրքական որբանոցի սնունդը, եթէ կարելի էր այդպէս ասել, Հրայրն էր ապահովում: Գիշեր է, պատերազմի պատրուակով հարկահանները, դեռեւս նախքան բռնահանութիւնը, տարել էին հայերի մատու, կաթնատու անասուններին ու ամբարների պարենը, բայց, խարբերողները, ինչպէս եւ յաճախ պարծենում էին, այդքան միամիտ չէին, ժամանակին հասցրել էին թաքուն պաշար հորել: Այդ՝ այդպէս էլ չբացուած թաքստարանների տեղերը Լոյօզը գիտէր, հենց սովի սպառնալիքը մթամպում էր որբանոցի վրայ, Մուսթաֆա Էֆենտուն, մի քանի աջաբաց սաների, որոնց ինքն էր ընտրել ու քաշէկներ անուանել, տանում էր Վերի, Վարի թաղերը, պարկերով ալիւրը, տիկերով իւրը, կնուճներով մեղրն ու տհալը շալակում, որբանոց էին տեղափոխում:

Ու մինչ Լոյօզն ու նրա «քաշազէկները» թալանում էին անապատներում բռնապահներուդ հայերի տները, Մուսթաֆա Էֆենտին լինգով, քունգով տեղահան էր անում նոստասենեակների տախտակամածները, քանդում էր որմնաթախտերի պատերը, պահուած ոսկիներ, ակնեղէն էր փնտրում եւ եթէ գտնում էր, լցնում էր մախաղը, տանում, կուսակալին էր յանձնում:

Մուսթաֆա Էֆենտին իր գտած գոհարեղէնի ո՛ր մասն էր յանձնում, ո՛ր մասն էր կնոջ ապահովութեանը յանձնում, Սապիթ պէյը չէր իմանում, այդ պատճառով էլ միշտ դժգոհ էր ձեւանում, կուսակալանիստում հետառաջ էր քայլում, գոռոգում.

- Ես եւքան տարի հարբերոյի վալին եմ, հայերի ունեցածը լաւ գիտեմ: Ենպէս չանես, որ գամ, կնոջդ փոխանը հանեմ, պահածներդ գտնեմ:

- Վալլահ-պիլլահ, Եւքան էր պէ՛յ, դու հոյ տեղեակ ես՝ հայերը գարթի մասին նախօրօք իմացել, ունեցուածքները վրաները կարել, յետներն են տարել:

- Հարբերոյի հայերը Կիլիկիայում (թուրքերը Արեգունիին հիւանդ էին ասում), կոտորուած-թափուած են, թէ ասածիդ կուսուում ես, գնա, հաւաքիր բեր, չբերեցիր, կնոջիցդ բացի քո փոխանն էլ եմ հանելու, քո պատճառով նահանգի տուրքը պակաս չեմ յանձնելու, պաշտօնագրով լինելու: Պատերազմ է, հայվա՛ն, հասկացիր: Մեր ազգի սակեւերները քո համար են ռուսական ճակատում գահում:

Մուսթաֆա Էֆենտին ճար չունէր, լուում էր: Մինչդեռ վստահ էր՝ եթէ հարբերոյի հայերն անգամ յետները հարստութիւն տարել են, մինչեւ Ծովք հասնելը գիւտոր-նստիկաններն են խլել, մնացածը, խորը թաքցրածն էլ շրջակայ քրտական հողաթ, հուզիչան, Օվաճըլ գիւղերի հուղկահարները... Ամէն դէպքում կուսակալի հրամանը կատարել չէր կարող: Եթէ կատաղէր, իրօք, որբերի ներկայութեամբ միայն Կիլիկիա հանըմի փոխանը չէ, իրենն էլ կը հանէր, խելքին ինչ փչեր, կ'անէր:

Այդ երեկոյ նա սրճարան թուրք խաղալու զգաց, Լոյօզին, Լոյօզի «քաշազէկներին» հաւաքեց, պարսատիկի նման երկճիւղ խցմարներ պատրաստել տուց: Ինչի՞ համար, չասաց: Առաւօտեան էլ հոճային չարտօնեց, որ նամագից յետոյ Արուանից սուրահներ կարդայ, որբերին երկար-բարակ պարզաբանի, որ իրենք թուրք մեծատունների գաւակներ են եղել, անհաւատ հայերն են ծնողներին մորթել, ունեցուածքները թալանել, եւ եթէ նրանք չբերեանող մուսուլման են, պիտի շուտ մեծանան, մէկի տեղը տաքը, քսան գետուր կառահիստան, ծնողների վրեժը լուծեն:

Թրքացած, այդ պատճառով հարբերում մնացած միակ հայը՝ կառապան Իպրահիմը որբանոցի առաջ բռնասայլը կանգնեցրել, իլու-հնազանդ սպասում էր: Մուսթաֆա Էֆենտին Լոյօզին երեկոյեան պարսատիկի նման երկճիւղ խցմարներ պատրաստած «քաշազէկներին» հրամայեց նստել: Դարձեալ չասաց ինչու: Բայց որբանոցով մէկ կատարծուցեց, որ «քաշազէկները» Ծովք են գնում: Արիսը վազեց, Հրայրին գտաւ, խնդրեց.

- Ինձ էլ տար էի:

- Ինչի՞,- գարմացաւ Հրայրը:

- Շատ եմ ուզում:

- Բայց ախր ինչի՞:

- Ես Ծովքի ափին եմ կնքուել:

- Պահ, ուրեմն դու քո կնուկը յիշում ես:

- Յիշում եմ: Հայրս որոշել էր ինձ եւ տարիքում մկրտել, որ մկրտութեան խորհուրդը հասկանամ:

Տղեկի թարթիչները թրթռում էին, եթէ մերժէր, լաց պիտի լինէր:

- Լա՛ւ, պարոն Պարթեւեանի յիշատակի համար կը տանեմ: Թա՛իր, նստիր, բայց այնպէս արա, որ Մուսթաֆա Էֆենտինի աչքով չընկնես:

Մուսթաֆա Էֆենտին բռնասայլ բարձրացաւ ու առաջինը հենց Ապտուլլային նկատեց, Հասանի վրայ բարկացաւ.

- Ես լակոտին ո՛րք ես տանում:

- Հասանի մի նայէք, պէ՛յ,- շողորթոթեց Հրայրը,- ամենաճարպիկ քաշազէկն է:

- Տեղ կը հասնենք, կը տեսնենք...

Ծովքը չէր փոխուել, իր մկրտութեան օրը՝ Վարդաճաղկի տնին էլ հենց այս նոյն տեղում կառքից իջան, տկալաստերով կղզու սուրբ Նշան վանքը հասան: Զահանան եկեղեցին տօնականօրէն զարդարել, իրենց էր սպասում:

Նա Մկրտութեան արարողութիւնը շարականների երգասացութեամբ սկսեց. միաժամանակ ջուր էր լցնում կնուկի ւազանն ու սուզում կարմիր, ճերմակ թէլերով ազուցուած նարթները՝ «որպէս Բրիստոսի տիգախոց

## ԳՐԻԳՈՐ ԶԱՆԿԵԱՆ

կողից ելած կենարար արեան ու ջրի խառնուրդ»: Այնուհետեւ ներկաներին դառնալով խնդրեց, որ իր հետ կրկնեն «հրաժարիմքը»:

Մկրտութիւնից յետոյ, սակայն, Արիսին մոռացան: Նահանգի երեւելիները շրջապատեցին հօրը, իսկ մայրը, որքան էլ որ հարբերոյի Սոկրատի կինը լինէր, նորահարս էր, միացաւ կանանց, շերտից վերցրեց, մօտեցաւ մատաղի կաթսաներին: Տղեկը մեն-մենակ ձանձրացաւ, չըբէջք լճին մօտեցաւ: Ոսկեթփուկ մի ձկնիկ, հենց ափի մօտ խայտում, Արիսի դէմքին ջուր էր ցայտեցնում: Նա էլ էր մենակ՝ ձանձրանում, խաղընկեր էր որոնում:

- Արի իրար հետ խաղանք,- ասում էր Արիսը:

- Դո՛ւ արի,- պոչն ուրախ շարժում էր ձկնիկը:

Արիսը ձեռքը մեկնեց, որ ձկանը բռնի, ափի հանի, գլորուց լիճը: Ձկնիկը գարմանալի արագութեամբ Ծովքի խորքերն էր փախչում, Արիսը թելերը պարզում էր, որ բռնի: Շուտով զգաց, որ լիճը լուրթ է, բայց ինքը ոչինչ չի տեսնում, ուզում է շնչել, չի կարողանում:

- Տղաս ո՛րք է,- տարածուեց մօր ահաբեկ ճիչը:

- Տղա՛ս,- արձագանգեցին շրջակայ լեռները:

Մայրը հագուստներով լիճը նետուեց, ջուրը պղտորեց: Նրա տասը մատները տաք սրատես աչքեր ունէին, պղտոր ջրում Արիսին գտան, փաթաթուեցին, ափի հանեցին: Յետոյ մայրը երկար դողդողում, ջուր էր ործկում, բայց Արիսին գրկից չէր իջեցնում: Նրա ոսկեփայլ ատամները խամրել, վախից կափկափում էին:

Գիշերուայ մի պահի մայրն իրեն արթնացրեց, ճերմակ վրանից դուրս հանեց:

- Երկնքին նայի՛ր, տղաս,- ասաց,- հիմա լուսաստղը կը ծագի, օրհնութեան լոյսով ճակատդ կպասկի:

Վարդաճաղկի տուն էր, երկնքում այնքան շատ աստղ կար, որ Արիսը չիմացաւ՝ լուսաստղը ծագե՞ց, ճակատը օրհնութեան լոյսով պասկե՞ց: Զունը տարել էր...

Ընկալի Մուսթաֆա Էֆենտին առաջինը բռնասայլից ցատկեց, ձեռքի խցմարով «քաշազէկներին» ցոյց տուց, թէ ինչպէս խողխողուած հայերի դիակները շուռումուռ պիտի տան, մատներին մատանիներ, պարանոցներին վզկոցներ, բերաններում թաքցուած ոսկեղրամ որոնեն: Ամենաշատ գտնողին որբանոցում անակնկալ էր սպասում: Թէ ինչ անակնկալ, իր մշտական սովորութեամբ, նախօրօք չէր տեսնում:

Թուրք որբուկներն իսկոյն ոգետրուեցին, առափնեայով մէկ ցրիւ եկան: Արիսը ձեւացնում էր, թէ մտելներ է քչիկորում, բայց հայեացքը կղզու սուրբ Նշան վանքի ւարկակներից կարել էր կարողանում:Սօրն էր որոնում:

Հունեյի ձայնը, ում հետ նոյն փսիաթին էր քնում, սթափեցրեց:

- Մուսթաֆա Էֆենտի,- գիւ, զնգուն ճիչը ցնծաց լճափով մէկ,- կնոջ գլուխ եմ գտել, ոսկի ատամներ ունի, բայց չեմ կարողանում ջարդել:

Որբերը նետուեցին ձայնի ուղղութեամբ, Արիսը հաւոր նախագագացում ունեցաւ, միւսներից առաջ անցաւ:

... Հունեյնը լայն բացել էր խողխողուած մօր ծնօտն ու խցմարով աշխատում էր պոկել ոսկի ատամնաշարը: Կողքին վեց ամսական քրոջ մարմինն էր, խանձարուրի ծունկներից ճանաչեց:

- Մամ՛ա ջան, քոյրիկ ջան,- Արիսը ճչաց, ընկաւ դիակների վրայ, որ թելերով պաշտպանի:

Հունեյնը կնոջ ծնօղը թողեց, իր յայտնութիւնից ոգետրուած, վեր-վեր թռաւ.

- Մուսթաֆա Էֆենտի, Ապտուլլան հայ է, ես վաղուց էի կասկածում, բայց համոզուել էի ուզում, լսեցի՞ք, հենց նոր հայերէն խօսեց:

Թէ յետոյ ի՞նչ եղավ՝ Արիսը չիմացաւ...

Հրայրն Արիսին փախցրել, խոժոռ անձաներից մէկն էր մտցրել, ռուկերին ճարճատուկ էր ճմրթում:

Տղեկը սարսաղ, բացեց աչքերը.

- Հը՛, գարթեցիր,- ժպտաց Հրայրը, - Ես խոտի հոտը մեռած մարդուն էլ ոտքի կը հանի:

- Ափարիկ,- կարկամեց տղեկը,- Ես երա՞զ էի տեսնում:

- Տեսնում էիր,- անորոշ գլխով արեց Հրայրը...

Մուրթ ընկաւ, Ծովքի խայտաղղ կոհակների սարսափի ս

# ԴԵՐԵՆԻԿԻՆ ԵՐԿԻՐԸ

«Ես իմ երկրի մեջ կ'ուզեմ ապրիլ»:

Ապրիլ 2024, Երեւան:

Դերենիկը ծնած է Ապարան: Ան այժմ կ'աշխատի որպէս վարորդ եւ իր գործը կ'ընէ ամենայն գոհունակութեամբ: Ան ուրախ եւ հաղորդական անձ մըն է, որ կը սիրէ խօսիլ եւ պատմել: Եթէ կ'ուզէ խօսիլ իւրաքանչիւր անհատի հետ որ իր ինքնաշարժը կը գործածէ շրջագայելու եւ տեղափոխուելու համար, բայց նաեւ կ'ուզէ պատմել իր պատմութիւնը:

«Ես այս գործը միայն զբաղմունքի համար կ'ընեմ», ըսաւ Դերենիկը երբ զիս կը փոխադրէր Երեւանի Սարեան փողոցէն դէպի Ալեք Մանուկեան փողոց: «Ես Երեւանի պետական համալսարանի ճարտարապետական բաժանմունքէն շրջանաւարտ եղած եմ,- շարունակեց ան,- հանգստեան կոչուեցայ եւ տունը մնացի եւ այդ ինծի պատճառով հոգեկան ճնշումներով»:

Դերենիկ 66 տարեկան է եւ զաւակները իր հոգեկան տագնապին լուծում գտնելու համար զինք քաջալերած են որ այս գործը ընէ՝ գէթ մասնակի ժամով: «Մինչեւ կէսօր կ'աշխատեմ,- ըսաւ Դերենիկ,- ատկէ ետք կ'երթամ տուն եւ թոնկներու հետ կը պարապիմ»:

Նայեցայ ժամացոյցիս: Արդէն կէսօր եղած էր: «Ես երեւի քու վերջին յաճախորդն եմ այսօր», ըսի Դերենիկին: «Այո՛, վերջինն ես, բայց շատ բախտաւոր կը զգամ որ սփիւռքէն եկած հայու մը հետ կը զրուցեմ», ըսաւ Դերենիկը:

Դերենիկի խօսակցութեան մէջ կար ջերմութիւն: Եթէ կը զրուցէր եւ կը պատմէր, բայց կը զգայի թէ ունէր հրճուանք մը: Իսկ հրճուանքը: Ան կ'ուզէր իր պատմութիւնը պատմել հայրորդիի մը:

«1990-ին Ատրպէյճանի դէմ պատերազմին մասնակցած եմ, այս ծախս ուղքեւ ծանր կերպով վիրաւորուեցայ: Բայց վիրաւորուելուն հետ ես ալ խիստ իրենց», ըսաւ ան քիչ մը ժպտելով, բայց նոյնքան նաեւ հպարտութեամբ:

Պատերազմէն ստացած վերքը տակաւին իր ազդեցութիւնը ձգած է Դերենիկին վրայ: Ան մինչեւ այսօր տակաւին դեղ պետք է ամէն որպէսզի լաւանայ: «Այս դեղերն ալ իմ ամէնօրեայ կերակուրն են», ըսաւ Դերենիկ՝ միշտ ժպիտը պահելով իր դէմքին վրայ:

Կը նայէի Դերենիկի դէմքին ու անոր ժպիտին, բայց նոյնքան կը տեսնէի այդ ժպիտի ետին իր ազգային հպարտութիւնը: Հայրտուրիւնը որ կերտած է իր ազգային ինքնութիւնը եւ նոյն այդ ինքնութիւնը բնորոշող հայրենի հողը: Ու տակաւին այդ հողին կանչը: «Չորս տարի Սպանիա մնացի եւ հոն աշխատեցայ,- ըսաւ Դերենիկ,- բայց չկրցայ դիմանալ եւ վերադարձայ Հայաստան: Ես իմ երկրիս մէջ կ'ուզեմ ապրիլ»:

Հրաժեշտ արի Դերենիկէն, բայց ապրեցայ իր հետ այդ քանի մը վարկեանները եւ հայրենի հողին վրայ՝ հայուն երկրին հարազատութիւնը: Հարազատութիւնը, որ հայը հայուն կը միացնէ:

Ծիծեռնակաբերդ:

Յուշահամալիրին տակ կեցած կը դիտեմ վարող կրակը ու կրակին չորս կողմը տեղադրուած յարգանքի տուրքը՝ ծաղիկները: Հոս կայ պատմութիւնը որ դարձեալ կ'ապրի: Պատմութիւնը որ ստեղծած է մեծ արհաւիրք: Իւրաքանչիւր հայ նահատակ՝ ներառեալ իմ քսան եւ ինկզ ընտանեկան պարագաներս: Եթէ իմ հարազատներս չեմ տեսած ու չեմ ճանչցած, բայց զիտեմ իւրաքանչիւր իրենց նկարներով: Եւ հոն՝ յուշահամալիրի վարող կրակին մէջէն, այդ նկարները կարծէք մէկ-մէկ դուրս կու գան որպէս մեռած-ապրող իրականութիւններ: Բայց ինչպէս անոնք չապրին երբ իմ երկրիս կազմած են եւ անոնք իմ մէջս են, որ անդադար զիս կը յուշեն: «Մենք մեռանք, որպէսզի դուն ապրիս, Հայր»:

Այս ապրող-չապրող յիշատակները պահ մը ընդհատեցի: Հնդկի տիկին մը նոյնպէս մօտեցաւ կրակին եւ յարգանքով ու ակնածանքով գլուխը խոնարհեցուց: Ան կարծէ մտած էր իր աշխարհին մէջ երբ իրեն հարցուցի. «Ինչպէ՞ս կը զգաս այս յուշահամալիրի ստեղծած խորհուրդին առջեւ»:

Չեմ գիտեր եթէ պետք եղածէն աւելի համարձակ եղած էի: Բայց ուզեցի գիտնալ իր ներաշխարհի սեւեռումները որպէս օտար: «Շատ ցաւալի է,- ըսաւ ան,- ես Հնդկաստանի Գաշմիր շրջանէն եմ եւ մենք ալ ապրած ենք շատ ցաւեր»:

Հնդկ տիկնոջ ցաւին հետ եւ վերադարձայ իմ ցաւին:

## ՊԿՏ. ԳՐԱՅԻ ՃԵՊԵՏԵԱՆ

Այս այն ցան է, որ իւրաքանչիւր հայ իր մէջ կրած-շարժած է աւելի քան հարիւր եւ ինը տարի: Այս այն ցան է, որ կը շարունակուի իւրաքանչիւր հայու մէջ եւ սերունդէ-սերունդ: Այս ցանը դարձած է հայուն հաւաքական ինքնութիւնը, որ չի մնար ցաւի սահմաններու մէջ: Այս ցանը ճեղքեց մահուան պատերը եւ ստեղծեց հայուն նոր կեանքը: Այս այն նոր կեանքն է, որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի այդ վարող կրակին մէջէն դարձեալ տեսայ նոյն այս ցանը, որ կ'ապրէր մահը, բայց նոյն այդ մահին մէջէն դուրս կը հանէր եւ կը շինէր նոր կեանքը: Այն կեանքը, որ ես եւ իւրաքանչիւր հայ ապրեցաւ եւ պիտի շարունակէ ապրիլ:

«Ինչպէ՞ս պիտի ապրիլ»:

Դերենիկը զգտած է իր ապրելու յետադիմութիւնը: «Ես իմ երկրիս մէջ կ'ուզեմ ապրիլ»:

Իսկ ե՞ս: Ես կ'ապրիմ ՊԵՂՐՈՒՅՔ, Կիպրոս, Զուելթ ու տակաւին:

Դերենիկ պիտի շարունակէ ապրիլ իր երկրին՝ Հայաստանի մէջ: Եւ ես պիտի շարունակեմ ապրիլ իմ երկիր-երկիրներու մէջ՝ սփիւռքի այս թէ այն տարածքներուն մէջ:

Կայ միացնող օղակը Դերենիկին եւ իմ միջեւ: Այս այն օղակն է, որ կը սկսի ֆիզիքական երկրէն ու կ'անցնի հոգեկանին: Այս օղակը Դերենիկին երկիրն է՝ Հայաստանը: Հայաստանը որ կը շնորհէ մէկ կողմէ ֆիզիքական կեցութիւն, բայց նաեւ կը լիցքաւորէ հոգեկանը: Հոգեկանը, իմա՛ պատմութիւնը, մշակոյթը, ինքնութիւնը, հաւատքը, ցեղասպանութիւնը ու տակաւին հպարտութիւնը: Այս բոլորը դուն կրնաս ապրիլ անկախ անկէ, թէ ֆիզիքապէս ուր կը բնակիս որպէս հայ: Հայաստանը որպէս պետականութիւն ունի իր ֆիզիքական դրուածքը, որ կը մարմնաւորուի իր աշխարհաքրտական տարածքով եւ սահմաններով: Ան՝ ըստ պատշաճի, պետք է յարգէ եւ ընկալէ համաշխարհային ընտանիքին կողմէ ընդունուած միջպետական արժեքափէրը: Հայաստանը նոյնքան եւ նոյնպէս հոգեկան երկիրն է: Հոգեկան երկիրը իւրաքանչիւր հայու համար՝ անկախ թէ հայը ուր կ'ապրի:

Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի կրակներուն մէջէն՝ Ապրիլ 2024, ես դարձեալ տեսայ իմ հարազատներու մեռած-ապրող կեանքերը եւ թէ ինչպէս անոնք եւ այդ նոյն կրակներուն մէջէն ճեղքեցին մահուան պատը եւ տուին ինծի դարձեալ մէկ պատուէր. «Հայր, մենք մեռանք որպէսզի դուն ապրիս»:

Ես պիտի ապրիմ իմ կեանքը ինչպէս որ իւրաքանչիւր հայ պիտի ապրի իր կեանքը: Եթէ ֆիզիքապէս պիտի ապրիմ-ապրիմը Սփիւռքի տարածքին, բայց հոգեպէս պիտի ապրիմ-ապրիմը Հայաստանի մէջ: Հայաստանը՝ Դերենիկին երկիրը, միացնող օղակն է հայուն ֆիզիքական ու հոգեկան կեանքերուն: Ան այդ երկիրն է, որ կ'ընդգրկէ հայուն երկիրը իր ամբողջական հասկացողութեան ընդմէջէն: Ան հայուն ապրած, ապրող եւ ապրելիք կեանքերուն երաշխիքն է, որ հայուն պատմութիւնը պիտի դնէ պատմութեան շարունակականութեան գործընթացին մէջ:

Դերենիկին երկիրը: Բայց նաեւ իմ եւ իւրաքանչիւր հայուն երկիրը:

Այն երկիրը որ հայուն ֆիզիքական ու հոգեկան կեանքերը կը միացնէ: Եւ անպայմանօրէն պետք է շարունակէ միացնել:

Եւ այս երկիրը Հայաստանն է:

# ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԵՐԲԷՉ, ՀԱՍՏԵՆԱԶԱՅ, ՔԻՐՈՏ, ԵԶԻՏԻ, ԹՈՒՐԲ, ԿՐՕՆԱԹՈՒՍ ՀԱՅՈՒՅԻ, ՉԱԶԱ ՎԿԱՆԵՐՆ ՌԻՊԱՅԲԱՐԻ ՎԿԱՆԵՐԸ ՅԱՆՈՒՆ ԸՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԿԱՐՈՒԹԵԱՆ

Եօզտեմիր ճեմ - Գերմանիոյ «Պոլսթալ»-ի երկարամեայ անդամ, «Կանաչներ»-ու կուսակցութեան ղեկավարներէն: Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւի հեղինակ: Ծագումով Զերքեզ (հօր կողմէ), Պոստոսի յոյն (մօր կողմէ):

Կայսերական Գերմանիան ոչ միայն հովանաւորած է 1915թ.-ի Հայոց ցեղասպանութիւնը, այլեւ ուղղակի մասնակից եւ յանցակից է օսմանեան Թուրքիոյ հետ անոր գործադրման: Այսօր հսկայական փաստեր կան Գերմանիոյ պետական արխիւներուն մէջ եւ ձեռք կը պահանջուի, որ երեւան հանք գանոնք եւ արդարութիւն պահանջէք:

2016թ.-ի Սեպտեմբեր, Պերլինի իր պատգամաւորական գրասենեակին մէջ կատարած հարցազրոյցի ընթացքին:

Ռազաթ Զարաթուլու.- Թուրք գրող, պատմաբան, խմբագիր, տպագրիչ, ցեղասպանագետ, քաղաքական ընդդիմադիր վտարանդի:

Հայերու դէմ ցեղասպանութիւն գործադրելով, Թուրքիա կորսնցուց իր նախկին կայսրութեան եւ այսօրուան «հանրապետութեան» ամենէն ստեղծագործ, արարող եւ տաղանդաւոր հնագոյն ազգաբնակչութիւնը: Եթէ ցեղասպանութիւն տեղի չունենար, այսօր Թուրքիա պիտի դառնար Եւրոպայի ամենէն յառաջադէմ երկիրներէն մէկը:

Հարկաւոր է ընդունիլ եւ հաշտուիլ մեր սեւ պատմութեան հետ, առեքտուիլ Հայոց ցեղասպանութեան ահաւոր ոճի իրականութեան հետ, ճանչնալով զայն, ներդրութիւն խնդրելով եւ հատուցելով մեր հայ եղբայրներէն եւ քաղաքացիներէն եւ ոչ թէ նոր դաւեր եւ արհաւիրքներ ծրագրել:

Երօ Ամատունի.- Համբէնահայ հետազօտող - լրագրող, արխիւագետ, բանահաւաք:

Թուրքերը մեզ ցեղասպանութեան ենթարկելով, կարծեցին թէ ամբողջովին ոչնչացանք: Սակայն կեանքի ակօսներուն մէջ փրկուած սերմնացան հունտերու նման շուտով ծաղկեցանք եւ վստահ եմ որ պիտի դառնանք լայնածաւալ բերքատու արտեր, հայրենիք, մեր պատմական հողերուն վրայ: Վստահ եմ որ այդ օրը պիտի ապրիմ:

Սալահ Մուսլիմ ՎԷ Զիրտ առասպելական ղեկավար, «Ժողովրդավարական Միութիւն» կուսակցութեան համանախագահ:

Հայ ժողովուրդին եղբայրական խորհուրդ կու տայի, որ ուսումնասիրեն այն պատճառները, որոնք յանգեցուցին ցեղասպանութեան եւ ոչնչացման: Հայերը պետք չէ վստահին այն բոլոր ուժերուն, որոնք օգտագործեցին զիրենք, քիւրտերուն նման, իրենց անձնական եւ տարածաշրջանային շահերուն համար եւ այսօր ոչ ոք կը ցանկանայ զինք բարձրացնել պաշտպանելու հայ ժողովուրդը նոր ցեղասպանութենէ: Մենք ալ ցեղասպանութեան ենթարկուեցանք, սակայն սորվեցանք վստահիլ մենք մեր ուժերուն, անոր համար այսօր ի վիճակի ենք պաշտպանելու մենք մեզ սպառնացող նորանոր արհաւիրքներէ: Միշտ պատրաստ ենք նեցուկ կանգնելու մեր ժողովուրդին, մեր ընդհանուր թշնամիներուն եւ չարիքներուն դէմ:

Արեւ Թապալեան.- Հիւսիսարեւելեան Սուրիոյ «Հայ սոցիալական խորհուրդի»-ի ղեկավարուհի, նախկին իսլամացուած հայուհի:

Այսօր աւելի քան 25.000 կրօնափոխ իսլամացուած հայեր կ'ապրին հիւսիսարեւելեան Սուրիոյ քիւրտ եւ արաբ ցեղախումբերու մէջ, որոնք կը պահեն իրենց արիւնակցական «մաքրութիւնը», փորձելով վերադառնալ հայ ժողովուրդին գիրկը: Այսօր, Հայոց ցեղասպանութենէն աւելի քան դար մը յետոյ, հայ ժողովուրդը ունի նախկին «կրօնափոխ», սակայն դէպի ծնունդ եւ լոյս դիմող հայորդիներ, որոնք փրկութեան համար պետք ունինք նուիրելու եւ միջոցներու, յաշտութեան հասնելու համար:

Կարօ Օլկար Պոյաճեան.- Տերսիմի հայոց անցեալին ու ներկային մասին հետազօտող ազգագրագետ:

Անտոյուի մէջ Տերսիմի մէջ ապրած հայեր, անմահ հոգիներ: Թեւ անոնք ֆիզիքապէս գոյութիւն չունին այլեւս, սակայն իրենց հոգիները կը սաւառնին հայկական հնագոյն քաղաքակրթութեան օրրանին վանքերուն ու եկեղեցիներուն, աւերակի վերածուած գիւղերուն եւ ւանդներուն մէջ: Ընտրիլի մեր արաբ եղբայրներուն ու քիւրտերուն, որոնք մէջ շատ են ծագումով հայեր, շնորհիւ մեծ նահատակ Սեյիտ Ռիզայի, Տերսիմ ոտքի կը կանգնի եւ կը կանչէ իր հայ որդիները՝ այցելելու այս դրախտավայրը, Մունզուտ-Մնձուր լեռան ու գետին ծոցին մէջ:

Անմահ նահատակ, հազարաւոր հայ որբ-որբուհիներ փրկած, հնագոյն հայ մագաղաթներ պահպանած զազա ցեղապետ Սեյիտ Ռիզա իր թուրք դահիճներուն, կառավարական առաջ: «Ես ձեր սուտերէն, խաբէութիւններէն չկրցայ գլուխ հանել, այդ դարդ եղաւ ինծի: Դուք ալ չկրցաք զիս ծնուկի բերել, այն ալ դարդ թող ըլլայ ձեզի»:

Եգիտի, Շինկալի նահանգի (Իրաք) ցեղապետ Հմմտ Շըրօ

Մենք հարիւրաւոր հայ որբ-որբուհիներ փրկեցինք թուրք հրոսակախումբերու կողմէ բնաջնջուելէ, զենքով պաշտպանեցինք եւ պատսպարեցինք զիրենք: Ապա, զիրենք յանձնեցինք հնչական գործիչ եւ որբահաւաք Արսէն Կիտուրիին:

Հայաստանի հեռատեսիլային ալիքին իր շնորհած հարցազրոյցին՝ 1991թ.-ին, 102 տարեկան հասակին, Հմմտ Շըրոյին որդին:



# «ՇՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ» ՎԱՒԵՐԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԸ, ՀԵՂԻՆԱԿ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆԵԱՆ

Հայոց ցեղասպանությունը վերապրող հայերու սրտերուն եւ մտքերուն մէջ այդ արհաւիրքը ահ, սարսափ, հաշտեցնական մտածում եւ զգուշութիւն դրած էր: Անոնք իրենց հարազատներուն եւ բարեկամներուն հետ տան մէջ յաճախ շշուկով կը հաղորդակցէին եւ ճշմարտութիւնն ու եղելութիւնները կ'արտայայտէին ցած ձայնով: Վարժութիւնն դարձած էր գրեթէ ամէն բան շշուկներով իմացնել հաղորդակիցին: Անոնք համար բարձրաձայն մտածելն ու խօսիլը ենթադրաբար վնասակար արդիւնքներ կրնային ունենալ: Վերապրողները մղուած էին գրեթէ ամէն բանի մասին խորունկ վերլուծումով մտածել եւ եթէ անհրաժեշտ ըլլար գաղափարներ փոխանցել ուրիշին՝ այդ մէկը անպայման շշուկով կ'ընէին: Հայաստանութեան սարսափելի յուշերը վերապրողներուն ու անոնց յաջորդող սերունդին այդ արհաւիրքները դարձուցած էին զգոյշ, շրջափակուած եւ սրամիտ: Անոնք այնքան երկար ու խորունկ կը մտածէին այդ հարցերուն մասին, որ կարելի էր անբող գիրք մը լեցնել անոնց եւ յաջորդ սերունդին մտածումներով: Այս իրականութիւնը Վարժութեան Ոսկանեան հետեւեալ ձեւով կ'արտայայտէ. «Կային որոշ բաներ, որոնց մասին խօսելու իրաւունք չունէի: Մասնաւորապէս խիստ սպառնալիքի տակ, ոչ ոքի իրաւունք չունէի ասելու, լինէր մանկապարտեզում, թէ որեւէ անձնասօթի, որ մեր տանը խօսում են շշուկով: «Ինչ կ'ընես շշուկով», - հարցընում էի: «Կը կարդամ», պատասխանում էր Կարապետ մեծ հայրս: «Ինտո՞ր կը կարդաս: Ո՞ր է գիրքը»: «Ա՛յ պետք չունիմ: Գոց գիտեմ»: «Լաւ, բայց ի՞նչ անուն ունի այդ գիրքը: Ո՞վ գրած է»: «Կարելի է դուն, օր մը»: Ինչ որ ահա այժմ անում եմ: Եւ այդպէս էլ անուանում եմ՝ «Շշուկների Մատենան» (էջ 30):


Ռումանահայ պետական-քաղաքական եւ ազգային գործիչ Վարժութեան Ոսկանեան իր մանկութեան եւ երիտասարդութեան մեծերէն լսածներով ու տեսածներով ռումաներէն հեղինակած է «Շշուկների մատենան» խորագրեալ վաւերագրական վեպը, որ անոնց կեանքի իրական դրուագներուն եւ իրողութիւններուն վրայ հիմնուած է: Գիրքին հայերէն թարգմանութիւնը կատարած է Սարգիս Սելեան, հրատարակուած է Հայաստանի գրողներու միութեան եւ Պուխարեստի «Արարատ» հրատարակչության գործակցութեամբ, լոյս տեսած էրեւան, 2012-ին, միջակ չափի 480 էջ:

Գիրքին հրատարակչական տուեալները.- Վարժութեան Ոսկանեան, «Շշուկների մատենան», Հայաստանի գրողներու միութեան եւ Պուխարեստի «Արարատ» հրատարակչության գործակցութեամբ հրատարակուած է, ռումաներէնէ հայերէն թարգմանութիւն՝ Սարգիս Սելեան, Երեւան, 2012, միջակ չափի 480 էջ:

Վարժութեան Ոսկանեան գիրքին հիւնդերորդ էջին վրայ իր հայրական մեծ հօր՝ Կարապետ Ոսկանեանի խօսքը զետեղած է, որ կ'ընէ. «Մենք կը տարբերինք ոչ թէ անով ինչ որ ենք, այլ այն մեռելներով, որոնք վրայ ամէն մէկս կ'ողբայ»: Այս խօսքին միտք բանին այն է թէ հայը անվերջ կը սգայ իր հարազատներուն անմարդկային կորուստը: Վերապրող Կարապետ Ոսկանեանի համար այնքան զօրաւոր ազդեցութիւն ունեցած է իր սիրելիներուն այդ ձեւով կորուստը, որ այդ ողբալի իրողութեան իրայատկութեամբ ան իբրեւ հայ ինքզինք կը բնորոշէ ու կը գանազանէ ուրիշ ազգերէ: Նոյն այս ճշմարտութեան մտա-

ծումով համակուած, որ Հայոց ցեղասպանութեան արհաւիրքի յիշողութիւնն է, անոր թողնուած Վարժութեան Ոսկանեան մղուած է գրելու «Շշուկների մատենան» վաւերագրական վեպը:

Վարժութեան Ոսկանեանի մայրական մեծ հայրը՝ Սեդրակ Մելիքեան Հայոց Մեծ Եղեռնի տարիներու իր տխուր փորձառութիւնն ու յուշերը փոխանցած է իրեն: Սեդրակ Մելիքեան ծնած է Կարիկի մօտակայ Չաքար գիւղը, հա-



անաբար 1900-ին, որովհետեւ ան իր ծննդեան ճիշդ թուականը չէր յիշէր, ինչպէս կ'ընէ հեղինակը: Երբ թուրքերը 1915-ին կը յարձակին Չաքար գիւղի վրայ, պատանի Սեդրակ իր մեծ մօր հետ Կարիկ կը գտնուէր: Վերադառնալով գիւղ, Սեդրակի երեք եղբայրը՝ Յարութիւն, որ ողջ մնացած էր, անոնց կը գոծէ գիւղին աղէտը: Յարութիւն եւ Սեդրակ իրենց մեծ մօր խորհուրդով լեռները կ'ապաստանին: Թուրք չէթէները գտնուելու կը ձերբակալեն: Հեղինակը թուրք չէթէները ետիջերի կը կոչէ: Այդ ետիջերիներու պարագլուխը Յարութիւնը կը գլխահատէ Սեդրակի աչքերուն առջեւ: Ապա ան Սեդրակի մագերէն ուժգին քաշելով կ'ընէ. «Լա՛ւ Նայիր, դու պիտի ապրես: Բաւական մեծ ես, որպէսզի հասկանաս: Բոլորին ասես ով եմ ես. իմ անունս գիտես եւ ինչ արի քո եւ քո ցեղին»: Այսպիսի դժոխական ու քստմտեղի պայմաններու տակ Սեդրակ Մելիքեան ազատ կ'արձակուի: Անմիջապէս ան արագավազ քայլերով յառաջ կ'ընթանայ, առանց հաւատալու որ պիտի փրկուի: Վարժութեան Ոսկանեան իր մեծ հօր՝ Սեդրակի մասին կ'ընէ. «Այդ պարագլուխին ղէմ Սեդրակ Մելիքեան իր վրեժը լուծեց այն միակ ձեւով, ինչպէս կարող էր. չմոռացաւ, բայց նրա անուան մասին միշտ լռեց» (էջ 20-21):

## ՅԱՐՈՒԹԻՆ ԻՍԿԱՆԵԱՆ

Սեդրակ Մելիքեանի ցոյրը՝ Սարթեհիկ տարիներ ետք գտնուած էր Հալէպի որբանոցներէն մէկուն մէջ: Սեդրակ զայն Կ. Պոլիս բերել տուած էր: Վերադառնալով Սեդրակի ողիսականի պատմութեան, ան անտառներուն մէջ ցերեկները պահուցելով եւ գիշերները քալելով հասած է մինչեւ Մուսա լեռան ստորոտը, այն յոյսով որ հոն հայեր կը գտնէ ու անոնց հետ ֆրանսական Նաւերով թուրքերու ձեռքէն փախուստ կու տայ, որովհետեւ լսած էր այդ մասին: Սակայն ափսոս որ անոնք արդէն ֆրանսական Նաւերով ազատած էին գեհեւէն եւ գաղթած: Սեդրակ իր ուղղութիւնը դէպի հիւսիս կը ճշդէ եւ օրերով գաղտնի անօթի եւ ծարաւ կը քալէ, մինչեւ իսկ անցնելով Երեւանէն ու Թիֆլիսիէն կը հասնի Օտեսա: Ապա ան կը մեկնի Կրայովա, ուր կը մնայ որոշ ատեն: Հոնկէ Սեդրակ Մելիքեան կ'անցնի Ռումանիա եւ կը հաստատուի Ֆոկշան քաղաքը: Վարժութեան Ոսկանեան իր մանկութեան այս բոլոր պատմութիւնը մանրամասնօրէն լսելի յետոյ եկած է հետեւեալ եզրակացութեան. «Մանկութեանս տարիների հայերի պատմութիւնը անվերջ պատմութիւն է» (էջ 31):

Արժանի է յիշել թէ Ռումանիոյ մէջ Բ. Համաշխարհային պատերազմի վերջաւորութեան, սարսափի մթնոլորտ մը կրկնուած էր մանաւանդ վերապրող հայոց համար, որոնք առաջին սարսափը ցմրուր ճաշակած էին թուրքէն, Մեծ Եղեռնի դաժանութեամբ: Արդարեւ համայնավարական կարգերը հաստատուելու սկզբնական շրջանին, Ստալինի հրամանով հազարաւոր ռումանացիներ՝ որոնք մէջ հայեր կը ձերբակալուին եւ դէպի Սիպերիա կ'աքսորուին: Հոն անոնք տաժանակիր աշխատանք տանելու տարուած էին, ծաղկեցնելու համար ծիւնտ անապատները: Վարժութեան Ոսկանեանեց բարեկամ գրագետ Սիրունին ալ Սիպերիա քսորաւորներուն մէջ էր: Անոր քսորի եւ ազատման պատումը հեղինակը մանրամասնօրէն կը կատարէ գիրքին առաջին գլուխին մէջ: Այդ օրերուն Ռումանիոյ եւ Արեւելեան Եւրոպայի այլ նորահաստատ համայնավար երկիրներու մէջ շատեր, որոնք մէջ հայեր, իրենց կեանքի ապահովութեան համար դիմած են նեւզ մատչելութեան, որ կը կայանար անհատներու մասին տեղեկութիւններ հայթայթել անոնց նախապէս վարած կեանքի վերաբերեալ, նաեւ սուտերով լեցուն եւ «քացայայտել» համայնավար իշխանութիւններու առջեւ: Մատնիչներուն եւ ձերբակալուածներուն թիւը հետզհետէ կը շատնայ ու Պուխարեստի Խորհրդային դէսպանատան հայագի հիւպատոս Սավա Դոնգուլով կոչ կ'ուղղէ դարբեցնելու մատնելու վատ արարքը՝ ելլելով այն մտավախութենէ, թէ ամբողջ հայ համայնքը կը փճանայ այդպիսով: Այս հարցին մասին Վարժութեան Ոսկանեան յստակօրէն կ'ընէ. «Քանի որ 1944-ի աշնանը հակահամայնավարներ գտնելը դժուար էր, առաջին ցուցակից յետոյ այս նոր կողբորացի ուսուցիչները (գործակցողները)՝ այսինքն մատնիչները՝ Յ.Ի.) մի ցուցակ եւս բերեցին, յետոյ ես մեկը: Մինչեւ որ անգամ սովետներն զգացին, որ չափն անցնում էին: Անվերջանալի ցուցակների առջեւ նստած, նոյնիսկ դէսպանատան հիւպատոս, ծագումով հայ Սավա Դոնգուլովը, ի պատիւ իրեն, որոշեց. «Կանգ առէ՛ք: Այս ընթացքով ամբողջ համայնքը կ'ընչկացնէք» (էջ 32):

(Շար.ը տեսնել 11րդ էջ)

**G. AYANIAN & SONS**  
Established in 1928

- ▶ Indoor/Outdoor lighting products
- ▶ Ventilation and air handling products
- ▶ Dehumidifiers/Air conditioning units
- ▶ All types of pumps
- ▶ Electric motors up to 500 KW and Gear motors
- ▶ Audio/Video, Interphones - Intercoms
- ▶ Electrical boards, Circuit breakers, Contactors
- ▶ Electrical installation products, Industrial and electronic accessories

**We serve various sectors that include:**

- Domestic / Residential buildings and complexes
- Commercial / Public areas
- Industrial sectors
- Project supplies and follow ups

**NEW ARRIVAL: SUPER SILENT AIR CONDITIONERS.**

**PIONEER**

Dora - Tel: 01/255222/3/4/5 - Gemmayze - Tel: 01/447000, 01/445396

Tel/Fax: 01/263583 E-mail: gasons@dm.net.lb

**BLACKBLUES**

GO BEYOND LOGISTICS, MAKE THE WORLD GO ROUND AND REVOLUTIONIZE YOUR BUSINESS.

**ABOUT US - AT A GLANCE**

BlackBlues is a renowned freight company that provides a wide range of high-quality import/export services to its clients all over the world. Working with BlackBlues, you have a dedicated, reliable, and hugely experienced team focused on growing a mutually beneficial, long-term relationship.

**MORE INFORMATION**  
www.black-blues.com

**OUR SERVICES**

- SEA FREIGHT & CHARTERING (LCL/FCL)
- AIR FREIGHT, CONSOLIDATION & CHARTERING
- LAND FREIGHT (LTL/FTL)
- MULTI-MODEL METHODS
- DOMESTIC TRANSPORT & DELIVERY
- CUSTOMS BROKERAGE & CLEARING
- PACKING & WAREHOUSING
- ARTWORK DOOR TO DOOR SERVICE
- PROJECT MOVEMENT
- AOG SERVICES 7/24
- DOCUMENTATION & LEGALIZATION

**GET IN TOUCH**

**HEADQUARTERS**  
Lebanon - Beirut - Birell, Al Nahr Street, Azar Bldg, 1st floor. Phone: +961 3 985 990 Fax: +961 3 570 574 EMAIL: info@black-blues.com

**KENYA**  
Kenya - Mombasa Kenyere Ave, Likoni Towers, Block JD, 6th floor, Momb. Phone: +254 716 809037 EMAIL: kenya@black-blues.com

**FOR EMERGENCY CASES:**  
PHONE: +961 3 680 198  
ATT: MRS. ALINE BAGHOYAN



### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԵՆԿԱՏՎՈՒՄԵՐՈՎ ՑԻՑԵՆՆԱԿԱՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՆՑԻԱ

Սիրելի ժողովուրդ հայոց ի հայրենիս եւ ի սփիւռս, Վերստին աղօթքով եւ խոնարհումով յիշատակում ենք Յայոց ցեղասպանութեան մեր սուրբ Նահատակներին, ովքեր ամուր պահելով իրենց հաւատքը, սերն ու նուիրումը առ ազգն ու հայրենին՝ մարտիրոսութեան պատկն ընդունեցին:

Յայոց ցեղասպանութեան սուրբ Նահատակների յիշատակը նշում ենք մի շրջանում, երբ մեր ժողովուրդը գտնուում է գոյաբանական նոր սպառնալիքների եւ անվտանգային լրջագոյն հիմնախնդիրների յանդիման: Յայրենի Արցախում իրականացուած ցեղասպանական գործողութիւններից եւ Արցախի հայաթափումից յետոյ ներկայիս մտահոգիչ ծանր իրավիճակ է Յայաստանի սահմանային տարածքներում:

Սուրբ Նահատակների լոյս յիշատակի առջեւ մեր նուիրական պարտքն է՝ պաշտպանել ամբողջականութիւնը մեր հայրենի երկրի, Նախանձախնդիր լինել հայոց անկախ պետականութեան զօրացմանը եւ որպէս սրբազան մասունք պահպանել մեր Նախնեաց աւանդներն ու ժառանգութիւնը:

Մեր ժողովուրդը հզօր է իր հերոսական անցելով, չարի ու չարիքի դէմ պայքարի վճռականութեամբ եւ նոյն ոգով պիտի հեռացնի իր կեանքից ազգային շահերին հակառակ կործանարար դրսեւորումները, առկայ բարոյ իրադրութիւնից ջանքերի մէկտեղումով ելքի ուղիներ գտնի եւ կերտի իր յաղթական ապագան:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այս նուիրական օրը միասիրտ աղօթքով հայցենք մեր սուրբ Նահատակների բարեխօսութիւնը, որ յարուցեալ Զրիստոսի շնորհների եւ օրհնութեան ներքոյ խաղաղ, անվտանգ ու բարօր լինեն մեր հայրենիքն ու ազգը, եւ մենք հաւատով ու յոյսով հաստատենք մեր ընթացքը ապահովութեան ու յառաջընթացի շարժումներում:

Թող Տիրոջ սերն ու խնամքը հովանի լինեն մեր հայրենիքին ու համայն մեր ժողովրդին այսօր եւ միշտ. ամէն:

## ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐԸ ԾԻՇԵՆՆԱԿԱՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՆՑԻԱ

Ապրիլեան ոգեկոչման շրջագիծէն ներս, Չորեքշաբթի, Ապրիլ 24-ի առաւօտեան, Երեւանի մէջ տեղի ունեցաւ քայլերթ դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:



Արդարեւ, քայլերթին իր մասնակցութիւնը բերաւ պատկիրակութիւն մը՝ բաղկացած Երեւանի Ա.Գ.Յնչակեան Կուսակցութեան փոխատենագետ՝ Ընկ. Վարազդատ



Եղիազարեանէ, Յ.Ս.Ս.-ի Կեդրոնական վարչութեան անդամ՝ Ընկ.Վազգէն Մետրոպեանէ, Երեւանի Յ.Ս.Ս.-ի ատենագետ՝ Ընկ. Յակոբ Տեմիրճեանէ, ինչպէս նաեւ հիւրաբար Երեւան գտնուող Ընկ.հի Անի Եփրեմեանէ:

Պատուիրակութիւնը յուշահամալիրին առջեւ գետնէն զոյգ ծաղկեպսակներ, որմէ ետք անմառ կրակին շուրջ խոնարհելէ ետք, անոնք գետնէն ծաղիկներ որպէս յարգանքի տուրք մեր մէկուկէս միլիոն անմեղ գոհերուն:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ 109-ԱՄԵՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՌԱՄԻՆԱՅԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ Ա.Գ.Յ.Կ. «Պանդուխտ» մասնաճիւղի վարչութեան, Շաբաթ, 19 Ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ռաուտա Յ.Ս.Ս. Պէյրութի ակումբին առջեւ տեղի ունեցաւ մոմավառութիւն՝ ի յիշատակ Յայոց ցեղասպանութեան Նահատակներուն: Մոմավառութեան ներկայ գտնուեցաւ Ռաուտա շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տէր Յակոբ Ա. Զինյ. Պատրիկեան, Ա.Գ.Յ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ՝ ընկեր Ալեքսան Բեռնարեան, Ա.Գ.Յ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ընկերները, գլխավորութեամբ Վարիչ Մարմինի ատենագետ՝ Ընկ. Վանիկ Տազեանի, Յ.Ս.Ս. Կեդրոնական վարչութեան ատենագետ՝ Ընկ. Միսակ Նաճարեան, ՅՅԴ «Շուշի» կոմիտեաներու ներկայացուցիչը, ինչպէս նաեւ Ռաուտա շրջանի մատրան Թաղական խորհուրդի ատենագետը:

Միջոցառման ընթացքին բացման խօսքով հանդէս եկաւ տիրուհիական Տալիտա Սալպաշեան, ապա Ա.Գ.Յ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Բեռնարեան փոխանցեց օրունակ պատգամը, ուր կարեւորեց Ապրիլ 24-ի այժմեականութիւնը: Ան ներկայներուն դիտել տուաւ, որ Ապրիլ 24-ի օրը խորհրդանշական օր մը պէտք է ըլլայ իւրաքանչիւր հայու համար, ինչպէս նաեւ ան ներկայներուն յայտնեց, որ Ապրիլ 24-ի օրը իւրաքանչիւր հայու համար պէտք է ըլլայ ուխտի վերանորոգութեան օր՝ կառնած մնալու մեր աւանդութիւններուն, մշակոյթին եւ շարունակելու պայքարը մինչեւ հասնինք արդարութեան: Ան նաեւ ողջունեց քոյր կազմակերպութեան ներկայացուցիչը, որով անգամ մը եւս լիբանանահայութիւնը փաստեց իր միասնականութիւնը, ապա




Ան ներկայներուն դիտել տուաւ, որ Ապրիլ 24-ի օրը խորհրդանշական օր մը պէտք է ըլլայ իւրաքանչիւր հայու համար, ինչպէս նաեւ ան ներկայներուն յայտնեց, որ Ապրիլ 24-ի օրը իւրաքանչիւր հայու համար պէտք է ըլլայ ուխտի վերանորոգութեան օր՝ կառնած մնալու մեր աւանդութիւններուն, մշակոյթին եւ շարունակելու պայքարը մինչեւ հասնինք արդարութեան: Ան նաեւ ողջունեց քոյր կազմակերպութեան ներկայացուցիչը, որով անգամ մը եւս լիբանանահայութիւնը փաստեց իր միասնականութիւնը, ապա

Ան ներկայներուն դիտել տուաւ, որ Ապրիլ 24-ի օրը խորհրդանշական օր մը պէտք է ըլլայ իւրաքանչիւր հայու համար, ինչպէս նաեւ ան ներկայներուն յայտնեց, որ Ապրիլ 24-ի օրը իւրաքանչիւր հայու համար պէտք է ըլլայ ուխտի վերանորոգութեան օր՝ կառնած մնալու մեր աւանդութիւններուն, մշակոյթին եւ շարունակելու պայքարը մինչեւ հասնինք արդարութեան: Ան նաեւ ողջունեց քոյր կազմակերպութեան ներկայացուցիչը, որով անգամ մը եւս լիբանանահայութիւնը փաստեց իր միասնականութիւնը, ապա



Ռաուտա շրջանի հոգեւոր հովիւ Տէր Յակոբ Ա. Զինյ. Պատրիկեանը, ողջունելէ ետք Ա.Գ.Յ.Կ. «Պանդուխտ» մասնաճիւղի վարչութեան Նախաձեռնութիւնը, ներկայներուն փոխանցեց իր սրտի խօսքը:

Աւարտին տեղի ունեցաւ մոմավառութիւն:



## PARKING SOLUTIONS AND FACILITY MANAGEMENT EQUIPMENT

- Parking management system
- Traffic guidance
- Pneumatic system
- Guard tour system
- Fleet management
- Sound distribution
- Electric locks
- Central clock system





# Ո Փ Ե Կ Ո Չ Ո Ւ Մ ՀՄՄ ԳԵՅՐՈՒԹԻ ԿԱԶՄԱԿԵՐԳՈՒԹԵԱՄԲ

Հովանավորությամբ ՄԴՀԿ «Աղսի» եւ «Ժիրայր Մուրատ» մասնաճիւղերու վարչութիւններուն, կազմակերպութեամբ ՀՄՄ

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Արագ Գոճաօղլանեան, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ նշեց Հա-

Օրուան պատգամաբերն էր ընկ. Յակոբ Կերկերեան, որ ներկայացուց հայկական պայքարի ուղին, անդրադարձաւ Հնչակ-

տիրացումին մէջ միասնական աշխատանք տանելու եւ միացեալ շարքերով պայքարը շարունակելու անհրաժեշտութիւնը, որուն



Պէյրուսի Սկաուտական խորհուրդին, Չորեքշաբթի 24 Ապրիլի երեկոյեան, Նոր Հաճնոյ Սուրբ Գեորգ եկեղեցւոյ թաղին մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 109-ամեակի ոգեկոչում, ներկայութեամբ

յոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակը միշտ վառ պահելու եւ անոնց պայքարի ուղին շարունակելու կարեւորութիւնը, վերահաստատելով որ ՀՄՄ-ի սկաուտութիւնը կը շարունակէ հայ պատանիներն ու երի-



եան կուսակցութեան եւ յեղափոխական շարժումի ծնունդին ու գործունէութեան, ապա խօսեցաւ Թուրքիոյ մէջ իթթիհատականներու յեղաշրջումին եւ իշխանութեան տիրանալուն, որուն յաջորդած էին հաւա-

միջոցա միայն կարելի է հասնիլ մեր նպատակներուն: Հանդիսութեան ասարտին իր սրտի խօսքը արտասանեց Մխիթարեան Միաբանութեան Միջին Արեւելքի փոխմեծաւոր Հայր



Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Զեօշկերեանի, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տագետեանի եւ անդամներուն, Հ.Կ.Բ.Մ.-ի ատենապետ Արամ Մալեան, Հ.Մ.Մ. Կեդրոնական վարչութեան ատենապետ Միսակ Նաճարեանի, Մարգական միութիւններու ատենապետներու, Մխիթարեան Միաբանութեան Միջին Արեւելքի առաքելութեան փոխ Մեծաւոր՝ Հայր Կորին Ճեւանեանի, Տեր Նարեկ Զեմինեանի:



տասարդները հայ պահելու իր առաքելութիւնը:

Երեկոյթի հանդիսավարն էր Յարութ Շիշմանեան, որ գեղարուեստական յայտագրով հերթաբար բեմ հրաւիրեց Փաթիլ Փափագեանն ու Սերժ Ազրապեանը՝ ասմունքելու հայերէնով ու անգլերէնով, եւ ՀՄՄ-ի գալիկները, որոնք ներկայացուցին շարք մը երգեր, ինչպէս նաեւ ծանօթ երգիչ Յովիկ Թաֆրանեանը, որ հանդէս եկաւ փունջ մը հայրենասիրական երգերով:



արութեան եւ արդարութեան սուտ խոստումներ: Ընկ. Կերկերեան ապա դիտել տուաւ, որ իթթիհատականներուն իսկա-

Կորին Ճեւանեան, իսկ Յեղասպանութեան սրբադասեալ նահատակներու բարեխօսական կարգով հանդէս եկաւ Սուրբ

**DAVOYAN DIAMONDS**  
www.davcodiamonds.com  
+961 1 881881



կան դիմագիծը շատ արագ բացայայտուեցաւ եւ անոնք կարճ ժամանակի մէջ գոր-

Գեորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տեր Նարեկ Զեմինեան:



ծաղրութեան դրին հայ ժողովուրդը բնաջնջելու իրենց ծրագիրը: Ընկ. Կերկերեան շեշտեց հայկական իրաւունքներու վերա-

Հսկումի հաւաքոյթը իր ասարտին հասաւ մումավառութեամբ՝ Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին:

# ՆՍԿՈՒՄ-ՄՈՄԱՎ ԱՌՈՒԹԻՒՆ

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

### ՀԱԼԵՊԻ Ա.Դ.Հ.Կ. ՏԵՐՈՒՆԻ ՈՒՍ. ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Հայոց ցեղասպանութեան 109-ամեակին առթիւ, հովանաւորութեամբ Ա.Դ.Հ.Կ.-ի Սուրիոյ Հիւսիսային շրջանի Վարիչ մարմինին եւ կազմակերպութեամբ Հալէպի Ա.Դ.Հ.Կ. Տիրուհի Ուս. Երիտ. Միութեան վարչութեան, Երեքշաբթի, 23 Ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 8-ին, Կիլիկեան Ճեմարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ հսկում-մոմավառութիւն:

Ընտրանի բազմութեան մը մասնակցութեամբ տեղի ունեցած հսկումին պատրաստը՝ ւած գեղարունեստական կոկիկ յատագրով իրենց մասնակցութիւնը բերին Տ.Ու.Ե.Մ.-ի «Ղօղանջ» երգչախումբը եւ Հ.Մ.Մ.-ի փողերախումբը:



Պաշտօնական բաժինը սկսաւ Հ.Մ.Մ.-ի փողերախումբին կատարողութեամբ՝ Սուրիոյ, Հայաստանի եւ Ա.Դ.Հ.Կ. հովանաւորութեան ջանքերով:

Օրուն հանդիսավարը հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յարգելու մեր մեկուկէ միլիոն նահատակներուն, ինչպէս նաեւ Արցախի եւ Սուրիոյ նահատակներուն յիշատակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ ընկերուհի Անի Թուրքան: Ան ըսաւ. «Հալէպահայութիւնը կ'ուխտէ մնալ հաւատարիմ մեր մեկուկէ միլիոն նահատակներու յիշատակին, մնալով վճռական Հայ Դատին եւ Հայկական պահանջատիրութեան պայքարին մէջ:


Գեղարունեստական յայտագրին սկիզբը, Լեւոն Աշքեանի կատարողութեամբ «Տեր Ողորմիա» շարականի կատարումով տեղի ունեցաւ ծաղկեմատոյցի եւ մոմավառութեան կարգը:

Տպաւորիչ ամունքով հանդէս եկաւ ընկերուհի Աննա Մարիա Գարագաշեան՝ «Ահաւոր բան մը այնտեղ» քերթուածով, որուն յաջորդեց մեներգ՝ «Երազ իմ երկիր հայրենիք», ընկերուհի Ալիք Իսկէնեանի կատարումով:

Ընկերուհի Նուշիկ Պէքարեան խոր ապրումով ամունքեց Դանիէլ Վարուժանի «Ձօն» բանաստեղծութիւնը: Գաղութի սիրուած երգիչ ընկեր Աւօ Սերէյեան իր մասնակցութիւնը բերաւ մեներգով «Տուն իմ հայրենի» երգը:

Ա.Դ.Հ.Կ. Տիրուհի Ուսանողական Երիտասարդական Միութեան խօսքը փոխանցելու հրաւիրուեցաւ կրթական մշակ Օրդ. Վարդուկ Զաթալպաշեանը. ան իր ելոյթով վերահաստատեց հայ ժողովուրդին վճռականութիւնը: «Հակառակ մեզի վիճակուած այս սեւ ճակատագրին, մենք որպէս Հայ ազգ, Յեղասպանութենէն հազիւ քանի մը տարի ետք կազմաւորուեցանք եւ Սփիւռքի զանազան գաղութներու մէջ աւելի քան դար մը կը գոյատեւենք, եւ կ'ուխտենք շարունակել մեր նահատակներու արեան գնով պահանջել մեր իրաւունքները: Յարգանք Հայ Դատի եւ Արցախի ի խնդիր իրենց կենքը զոհաբերած մեր նահատակներուն. կը մնանք հաւատարիմ մեր պահանջատիրական պայքարին», ըսաւ ան:

Ընկերուհի Լիլիթ Օրտէքեան «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծութեան ամունքով հմայեց ներկաները:



Ապա հրաւիրուեցաւ Ա.Դ.Հ.Կ.-ի Սուրիոյ Հիւսիսային շրջանի Վարիչ մարմնի ատեսայետ ընկեր Աւետիս խոշաֆեանը, որ ընդգծեց դարեր շարունակ Հայ ազգին դերը եւ գոյատեւման իւրայատուկ ներկայութիւնը Սփիւռքի մէջ: Եզրափակելով իր ելոյթը, ան մատնանշեց, որ «Արեւմտահայաստանէն մինչեւ Արցախեան պատերազմը ցոյց տուաւ, որ թուրքը նոյն թուրքն է: Նոյն արիւնարբու թուրքն է, որ կ'ուզէ հայը ոչնչացնել: Մեր տեսակը պայքարի տեսակ է, մենք պիտի մնանք այն ազգը, որ մինչեւ վերջին շունչը պիտի պայքարինք մեր հողին եւ արդար դատին համար: Եկէք վերանորոգենք մեր ուխտը սուրբ նահատակներուն հանդէս՝ հաւատարիմ մնալով մեր դատին ու պայքարին: Փռոք ու պատիւ մեր բոլոր նահատակներուն»:



Տ.Ու.Ե.Մ.-ի «Ղօղանջ» երգչախումբը, ղեկավարութեամբ Պրն. Ներսէս Թոփչեանի, ներկայացուց փունջ մը ազգային-հայրենասիրական երգեր: Հանդիսութիւնը վերջ գտաւ «Սարդարապատ» յաղթերգով:



LEBANON 100 LL - 1925      LEBANON 250 LL - 1939



ARMENIA 250 ROUBLES - 1919      ARMENIA 50000 DRAM - 2001



EGYPT 20 Piastres 1937 (Silver coin)      LEBANON 400 LL 1980 (Gold coin)      U.S.A. One Dollar 1880 (Silver coin)

**VENUS EXCHANGE**  
**HAIGARAM KALINDJIAN & CO**  
 BUYING & SELLING  
 All types of currencies  
 Gold & Silver coins  
 Old paper money

Rond point Dora Kharrat Center Beirut, Lebanon      Tel: 01-267065 01-267196 Fax: 01-267196 E-Mail: venusl@idm.net.lb      P.O.Box 80341 Bourj- Hamoud Beirut-Lebanon



**Ichkhanian**  
 traditional bakery since 1946

**Zalka Branch**  
 Monday to Saturday  
 from 9:00 till 16:00  
 Asaad Rachid Street  
 Mafra Byblos Bank  
 Grand Park Building

**Beirut Branch**  
 Tuesday to Sunday  
 from 9:00 till 15:00  
 Hussein Beyhum Street  
 Zokak el-Blat  
 Zoughbi Building

for delivery and take-away      call: +961 4 717586 +961 71 117776  
 for delivery and take-away      call: +961 1 375178 +961 3 216012

www.IchkhanianBakery.com







### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանահայրենիքը այս տարի կրկին մեծ շուքով ոգեկոչեց Հայոց Ցեղասպանության 109-րդ յիշատակը, յուսալով որ համազարդությամբ այս ամսոցը անգամ մը ես կ'ամրապնդեմ ողջ հայության միասնական ոգին:

Դժբխտաբար սակայն, քայլարշափի աւարտին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մուտքին, ՀՅԴ-ԼԵՄ-ի կողմէ տեղի ունեցաւ օրուան խորհուրդին եւ ոգիին ոչ յարիր երեսոյթ մը:

Արդարեւ, այն պահուն երբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր պատգամը կ'ուղղէր ողջ հայության համախմբուելու եւ միասնականութեամբ յաղթահարելու մեր առջեւ ծառայած մարտահրաւերները, ոմանք կը փորձէին Ապրիլ 24-ի խորհրդանշական օրը ծառայեցնել իրենց քաղաքական յետին նպատակներուն, գլխաւոր ամպիոնէն անյարգալից արտայայտութիւններ ուղղելով եւ արարք կատարելով Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդին կողմէ ընտրուած վարչապետի հասցեին:

Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի Ծրջանի Վարիչ Մարմինը խստօրէն կը դատապարտէ տեղի ունեցածը եւ կը գտնէ որ համայն հայութեան համախմբումի եւ միասնականութեան խորհրդանշող հանդիսացող Ապրիլ 24-ը քաղաքականացնելու փորձը անարգանք է մեր նահատակներու յիշատակին եւ միմիայն կը նպաստէ գաղութի պառակտման եւ միասնականութեան ոգիի ջլատման:

Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի Ծրջանի Վարիչ Մարմինը նաեւ կոչ կ'ուղղէ մեր սիրելի հայրենակիցներուն՝ Հայաստանի Հանրապետութեան եւ հայ ժողովուրդի շահերը վեր դասել նեղ-քաղաքական ու հատուածական հաշիւներէ եւ գործել միասնական ոգիով, յաղթահարելու համար մեր առջեւ ծառայած բոլոր մարտահրաւերները:

Ս.Գ.Հ.ՆՉԱԿԵԱՆ ԿՈՄՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

25 Ապրիլ 2024

## ՄԵԾ ՀԱՅՐԱ ՈՉ ԵՄՍ Է

Քառասուն օրերը ինչ արագ անցան: Բայց միշտ ներկայ ես ու ներկայ պիտի մնաս սրտիս մէջ սիրելի «տէտէ»ս: Մեղմ ձայնով քու բարի խօսքերդ, խրատներդ ու խորհուրդներդ տակաւին կը յիշեմ: Եւ միշտ պիտի յիշեմ: Անոնք իմ կեանքիս ուղղութիւն կու տային չարք բարիէն գաւնազանելու համար: Զու կեանքի հարուստ փորձը կը փոխանցէիր ինձի եւ թոռնիկներուդ: Անոնք ինչպէ՞ս պիտի մոռնամ ես:



դարցուց բոլորս: Ցաւոտ կեանքին մէջ մարդս անգոր է փոխելու Աստուծոյ որոշումը: Վերջին օրերուն, ուժասպառ էիր, Նոյնիսկ չկրցար խօսիլ, շոյեցիր երեսս, այտերս եւ բռնեցիր ձեռքս ու ամուռ սեղմեցիր սրտիդ մօտ:

Մեզմէ յաւիտեան բաժնուեցար տարուան ամենէն գեղեցիկ եղանակի առաջին օրը՝ Մարտի 21-ին: Ամսոռանակի օրը, որ Նոր յոյսեր, երազներ ու խանդավառութիւն պիտի տար, տուաւ սուգ, արցունք եւ տխրութիւն: Գարնանային ծաղիկներով զարդարուած շիրիմիդ դիմաց ծունկի եկած, խունկ եւ մոմ վարելով կու գամ ուխտել, որ քու տիպարոջ միշտ պիտի փայլի իմ յիշողութեանս մէջ եւ անկատար երազներդ պիտի քանամ իրականացնել արդարացնելով հարազատներուն յոյսերը:

Սգակիր Թոռնիկդ՝ ՍԱՐԻԱ



Նոր Մտորդի  
Մշակութային Միութիւն

### ԱՐԵԳ

### ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ԵԼՈՅԹՆԵՐ



31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ

AREK  
DANCE TROUPE

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՈՐԲ. ԸՆԿ ՍՈՒՐԱՏ ՊՕՅԱԾԵԱՆԻ մահուան քառասունեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2024-ին, Նոր Հաճնոյ Սբ. Գեորգ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Սբ. Պատարագի:



Salon  
**Razmig**  
POUR DAMES

04-725808 / 03-242531

Fawar Antelias road  
Antelias - Lebanon

Nermi Fashion

Fashion is our Profession

PARALLELE

Project

Tel. Off. (01) 261 735 / 240 165 / 240 166 - Mobile: (03) 305 272  
Fax: 961 01 261 735 - E-mail: nermifashion@hotmail.com  
P.O.Box: 80176 - Bourj Hammoud, Lebanon

## ԱՅՍՕՐՈՒՄՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի ԹԻՒԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԵՆ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐԱՄ ԵՒ ԼԻՏԻԱ ՄԱԼԵԱՆ

### ARARAD DAILY NEWSPAPER

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN  
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المحبرة المسؤولة: اني صرافيان  
تصدر عن شركة ماسبيس للمباعة والنشر (ش.م.م.)